# Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 08 (1708) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 7, 2015
VOLUME 35, NO. 08 (1708) SATURDAY, MARCH 7, 2015

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Ուրուկուէյի Հնչակեաններու Ուշագրաւ Նախաձեռնութիւնը




*Մոնթեվիտէոյի Հնչակեան կեդրոնին վրայ պարզուած եւ Հայոց ցեղասպանութիւնը ոգեկոչող պաստառ*

Մարտ 1-ին տեղի ունեցաւ Ուրուկուէյի նորընտիր նախագահ Թապարէ Վասկէզի երդման արարողութիւնը: Այս առթիւ մայրաքաղաք Մոնթեվիտէօ ժամանած էին Հարաւային Ամերիկայի գրեթէ բոլոր երկիրներու նախագահները, ինչպէս նաեւ ներկայացուցիչներ՝ աշխարհի այլ երկիրներէն:

Հանդիսութիւններու ծիրէն ներս, բարձրաստիճան անձնաւորութիւնները այցելեցին նաեւ Նախագահական Պալատ:

Նկատի առնելով որ, Ուրուկուէյի Հնչակեան կեդրոնը կը գտնուի նոյն թաղամասին մէջ եւ Նախագահական Պալատ այցելողները պէտք է անցնէին Կեդրոնի առջեւէն, Կուսակցութեան ղեկավարութիւնը պատեհ առիթը նկատած է, այցելուներու ուշադրութիւնը հրաւիրելու Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակին վրայ:

Ակումբի ամբողջ լայնքով, սպաներէն լեզուով հսկայ պաստառ մը պարզուած է՝ յիշեցնելով Թուրքիոյ կողմէ գործուած ցեղասպանութիւնը եւ ոգեկոչելով 100-ամեակը:

Այս նախաձեռնութիւնը մեծ հետաքրքրութիւն յառաջացուցած է նաեւ հանդիսութիւնները լուսաբանող լրագրողներուն մօտ:

## Բրիտանացի Վերլուծաբանի Կարծիքով Հայ-Թրքական Արձանագրութիւններուն Վերադարձ Չի Կրնար Ըլլալ

«Ամերիկայի ձայնին» տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Ուաշինկթընի Քարնիկի Հիմնադրամի աւագ վերլուծաբան՝ Թոմաս Տի Ուաալ կարծիք յայտնած է որ, Հայ-Թրքական արձանագրութիւններուն վերադարձ չի կրնար ըլլալ:

Մասնագէտի համաձայն, 2015-ին Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններուն մէջ լուրջ յառաջընթաց չսպասուիր: Այսուհանդերձ, ոչ պաշտօնական մակարդակով, երկկողմ քաղաքացիական եւ մշակութային կապերը կը շարունակեն զարգանալ. - «Կ'առնուին քայլեր, որոնք թէեւ փոքր են, սակայն կ'օգնեն երկկողմ յարաբերութիւններու դրական մթնոլորտի ձեւաւորման»:



*Ամերիկացի վերլուծաբան՝ Թոմաս Տէ Ուաալ*

Սակայն, հայ-թրքական արձանագրութիւններուն վերադարձ չկայ, համոզուած է Թոմաս Տի Ուաալ: Անոր կարծիքով, երկրորդ անգամ անդրադառնալ արձանագրութիւններուն, չի կրնար իրեն թոյլ տալ երկու կողմերէն եւ ոչ մէկը: «Կը կարծեմ, շատ դժուար կ'ըլլայ արձանագրութիւններուն վերադառնալը, որովհետեւ անոնց նկատմամբ հսկայական բացասական վերաբերմունք կայ ինչպէս Հայաստանի, նոյնպէս ալ Թուրքիոյ մէջ», - շեշտած է ան:

Ինչ կը վերաբերի Միացեալ Նահանգներու ջանքերուն, Տի Ուաալի կարծիքով, Ուաշինկթըն կրնայ լուրջ ոգեւորութիւն դրսեւորել միայն նոր նախագահի օրով: «Դժբախտաբար, երբ Միացեալ Նահանգները, նախագահի մակարդակով հարցի մը վրայ ջանքերը կը կեդրոնացնեն եւ այդ ծրագիրը կը տապալի, անոնք կ'անցնին յաջորդ հարցին՝ նախորդ հարցով զբաղելու ցանկութիւն չունենալով», - ըսած է վերլուծաբանը:

Ըստ Թոմաս Տի Ուաալի, այս առումով հայ - թրքական յարաբերութիւններուն համար հեռանկարային կրնայ ըլլալ Հիլըրի Քլինթընի յաղթանակը՝ յաջորդ նախագահական ընտրութիւններուն:

## Հինգ Հայեր Միլիարտատէրերու Ցանկին Վրայ

Ամերիկեան «Ֆորպս» պարբերականը հրապարակեց Աշխարհի ամենահարուստ անձերու 29-րդ ցանկը: Այս տարի միլիարտատէրերու մրցանիշ հաստատուած է՝ հասնելով 1826 անձի: Անոնց ընդհանուր կարողութիւնը կազմած է 7.05 թրիլիոն տոլար՝ մէկ տարի առաջուայ 6.4 թրիլիոնի դիմաց:

Աշխարհի ամենահարուստ մարդը կրկին Մայքրոսոֆթի հիմնադիր Պիլ Կէյթսն է: Անոր հարստութիւնը, 2014-ի համեմատ աճած է 3.2 միլիարտով՝ հասնելով 79.2 միլիարտ տոլարի: Կէյթս 24 տարուայ ընթացքին 16 անգամ յայտնուած է առաջին դիրքի վրայ:

Մեքսիքացի Քառլոս Սլիմ Հելու ցանկի երկրորդն է՝ 77.1 միլիարտ տոլարով: Ան Հարաւային Ամերիկայի հեռահաղորդակցութեան կապի միջոցներու սեփականատէրն է:

Ամերիկացի ներդրող Ուորըն Պաֆֆէթ նահանջած է 3 դիրք՝ 72.7 միլիարտ տոլարով:

«Ֆորպսի» միլիարտատէրերու ցանկին վրայ կան նաեւ հայեր: Ամենահարուստ հայը Սերկէյ Գալիցկին է (Ցարութիւնեան), որու կարողութիւնը գնահատուած է 9.4 միլիարտ տոլար (162-րդ դիրքի վրայ): Քըրք Քրքորեանը 4.2 միլիարտ տոլարով կը գրաւէ 393-րդ դիրքը:

Ռուսաստանաբնակ գործարար Սամուէլ Կարապետեան 4 միլիարտ տոլարով 418-րդն է: Արժանթինահայ Էտուարդօ Էունեկեան 1.9 միլիարդ տոլարով 1006-րդն է, իսկ Դանիէլ Խաչատուրովը 1.6 միլիարտ տոլարով՝ 1190-րդը:

Այս տարի միլիարտատէրերու ցանկին վրայ աւելցած է 290 նոր անուն, որոնց շարքին է յայտնի պասքէթպոլիստ Մայքլ Ճորտընը: Նորաթուխ միլիարտատէրերու մօտ 25%-ը կամ 71 հոգի Չինաստանէն են: 57 նոր միլիարտատէր Ամերիկայէն են, 28-ը՝ Հնդկաստանէն:

2014 թուականի համեմատ, ցուցակէն դուրս մնացած են 138 միլիարտատէրեր, որոնց շարքին, Ուքրանիոյ նախագահ Պյոտր Պորոշենքոն, ինչպէս նաեւ նաւթային ոլորտի բազմաթիւ ներկայացուցիչներ:

Ռուս միլիարտատէրերու թիւը 111-էն պակասած է 88-ի:

## Ատրպէյճան կը Շարունակէ Արհամարհել Մինսկի Խումբի Կոչերը

Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ տիրող իրավիճակը մեկնաբանելով, Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան ըսած է թէ, ատրպէյճանական կողմը հերթական անգամ ցոյց տուաւ, թէ ինչպէս կը վերաբերի ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու կոչերուն՝ խստօրէն հետեւելու հրադադարի պահպանման եւ զերծ մնալու իրավիճակը սրող քայլերից:

Արտաքին Գործոց Նախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ՝ Նալբանդեանը շեշտած է, որ վերջին օրերուն հայ - ատրպէյճանական սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի շփման գիծի վրայ իրավիճակը կրկին լարուած է Ատրպէյճանի զինուած ուժերու սադրանքներուն հետեւանքով, ինչ որ հանգեցուցած է մարդկային զոհերու:

Մինսկի խումբի համանախագահները տարածաշրջան իրենց վերջին այցելութեան աւարտին հրապարակած յայտարարութեան մէջ յայտնած էին, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները համաձայնած են քննարկել զինադադարի ամրապնդմանն ուղղուած եռանախագահներու առաջարկները: «Վերոյիշեալ սադրանքներով Պաքուն եւս մէկ անգամ ի ցոյց է դնում իր արհամարհանքը միջնորդների առաջարկութիւնների հանդէպ» - յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարը:

Լեռնայի Ղարաբաղի տարածք ներխուժելու Ատրպէյճանական փորձերը կը շարունակուին, լարուած պահելով սահմաններու վրայ տիրող իրավիճակը:

Անցնող մէկ շաբթուայ ընթացքին հայկական կողմէն արձանագրուած է 5 զոհ: Թշնամիի ներթափանցման բոլոր փորձերը ձախողութեան մատնուած են եւ անոնք բազմաթիւ զոհեր տալէ ետք վերադարձած են իրենց նախկին դիրքերը:

Հակառակ այս իրողութեան, ատրպէյճանական կողմէ կը շարունակէ լարուած պահել իրավիճակը, յստակ նպատակ հետապնդելով՝ ճնշում բանեցնել Մինսկի Խումբի միջնորդներուն վրայ, որպէսզի հայկական կողմէն զիջումներ ապահովէն:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ում ընդդիմութիւն կը լինի ԲՀԿ-ն

*ԱՐՄԻՆԷ ԱՒԵՏԵԱՆ*

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան՝ իշխանութիւնների կողմից կապիտուլիացիայի ենթարկուելուց յետոյ հետաքրքիր իրավիճակ է ստեղծուել ներքաղաքական դաշտում՝ թէ՛ իշխանական, թէ՛ ոչ իշխանական թեւերում: Նախ՝ իշխանութիւնը մնաց գրեթէ առանց հակառակորդների: Ոչ իշխանական դաշտից «Դաշնակցութիւնը» ուր որ է պատրաստւում է իշխող Հանրապետականի հետ կոյալիցիա կազմել: «Օրինաց երկիրը» դեռ պէտք է ինքնահաստատուի ընդդիմութեան դիրքերում: Բայց դա այդ կուսակցութեան համար բաւականին դժուար է, քանի որ ՕԵԿ ղեկավար՝ Արթուր Բաղդասարեանն առիթը բաց չի թողնում ասելու, թէ Սերժ Սարգսեանն իր ընկերն է: Իսկ հարեւանցիօրէն միայն կառավարութեանն ու վարչապետ Յովիկ Աբրահամեանին քննադատելով՝ համոզիչ ընդդիմութիւն չեն դառնայ: «Ժառանգութիւնն» այն կուսակցութիւնն է, որի դէպքում ասում են՝ վեց հոգով եօթ երգ են երգում: Խորհրդարանական ոչ իշխանական ուժերի մէջ թերեւս ՀԱԿ-ն է հիմնական ընդդիմադիր ուժը, բայց այդ կուսակցութեան ռեսուրսները բաւարար չեն իշխանութեան դէմ պայքար ծաւալելու համար, բացի դրանից՝ եռեակի փլուզումից յետոյ դեռ պէտք է ուշքի գայ: Իսկ նման իրավիճակում իշխանութիւնը թէեւ մնացել է առանց լուրջ հակառակորդների, բայց միաժամանակ յայտնուել է քաղաքական դաշտի աւերակների վրայ:

Բայց ամենահետաքրքիրը դեռեւս ԲՀԿ-ի շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններն են, եւ թէ առաջիկայում ինչ նոր զարգացումներ տեղի կ'ունենան այդ կուսակցութեան հետ: Յայտնի է, որ Փետրուարի 5-ին այդ կուսակցութիւնն արտահերթ համագումար է հրաւիրելու, որի ժամանակ պէտք է փոխուի ԲՀԿ-ի ղեկավար կազմը: Չի բացառւում, որ որոշ անդամներ լքեն կուսակցութիւնը: Նախնական տեղեկութիւնների համաձայն՝ այդ ԲՀԿ-ի նոր նախագահը լինելու է Նայիրա Զոհրաբեանը, ում թեկնածութեան համար արդէն համաձայնել են իշխանութիւնները: Յայտնի է, որ անցած շաբաթ ԲՀԿ մի քանի անդամներ կառավարութիւնում հանդիպել են Յ. Աբրահամեանի հետ եւ քննարկել կուսակցութեան գոյութեան հետ կապուած խնդիրները:

«Առաջին Լրատուական»-ի տեղեկութիւններով՝ մեծ թուով ԲՀԿ-ականներ արդէն հանդիպել են Ս. Սարգսեանի հետ եւ իրենց հաւատարմութեան հաւաստիացումներն են տուել նրան: Ի դէպ՝ այդ ԲՀԿ-ականների մէջ եղել են նաեւ այնպիսի գործիչներ, ովքեր մինչեւ Փետրուարի 12-ը՝ մինչեւ ՀՀԿ խորհրդի նիստում Գագիկ Ծառուկեանին ուղղուած Սերժ Սարգսեանի յայտնի ելոյթը, անշեղօրէն իշխանափոխութեան էին գնում:

Իսկ այսուհետ ԲՀԿ-ն յայտնուելու է իշխանութիւնների ազդեցութեան ներքոյ, որի համակարգողը լինելու է Յովիկ Աբրահամեանը: Այն որ Յ. Աբրահամեանը իր խնամի Գ. Ծառուկեանի միջոցով որոշակի ազդեցութիւն ունէր ԲՀԿ-ի վրայ եւ ԲՀԿ-ի միջոցով դարձաւ վարչապետ, բոլորը գիտեն: Բայց հիմա նա ոչ թէ ազդեցութիւն ունի ԲՀԿ-ի վրայ, այլ այդ կուսակցութիւնն ամբողջութեամբ է վերցնում իր ձեռքը: Ընդ որում՝ իշխանական դաշտում տեղեկութիւններ են շրջանառւում, թէ ԲՀԿ-ն իր նոր տրանսֆորմացիայից յետոյ ոչ միայն մնալու է ոչ իշխանական դաշտում, այլեւ յայտարարելու է, որ քաղաքագիտութեանն անհասկանալի այլընտրանքից դառնալու է ընդդիմութիւն: Եւ կը ստացուի մի հետաքրքիր իրավիճակ՝ իշխող ուժի, վարչապետի համակարգման ներքոյ գտնուող ընդդիմութիւն:

Բայց այդ դէպքում ո՞ւմ է քննադատելու ԲՀԿ-ն: Իրենց ղեկավար Յ. Աբրահամեանին հօ չի՞ քննադատելու: Թէեւ չափի մէջ պայմանաւորուածութեան շրջանակներում կարող են նրան էլ շատ թոյլ քննադատել: Ս. Սարգսեանին նոյնպէս նախկինի նման չի կարողանայ քննադատել. դա նրանց թոյլ չի տրուի: Եւ կը ստացուի, որ ԲՀԿ-ն պէտք է վերսկսի նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանին քննադատելը, որը հիմա թէեւ իշխանութեան չէ, բայց հօ 6 տարի վարչապետ է եղել: Եւ նրա այդ ստաժը ԲՀԿ-ի համար դեռ մի քանի տարուայ քննադատութեան հիմք կը հանդիսանայ եւ նրանց ընդդիմադիր դիրքերից հանդէս գալու հնարաւորութիւն կը տայ:

Արժէ նշել, որ այս ամբողջ պատմութեան մէջ շահող դուրս եկաւ նաեւ Յ. Աբրահամեանը, որին բաժին հասաւ տարիներ շարունակ Գ. Ծառուկեանի կառուցած կուսակցութիւնը: Առաջիկայում արդէն հնարաւոր կը լինի ասել, որ ի դէմս ԲՀԿ-ի՝ նա կ'ունենայ սեփական կուսակցութիւնը:

Քաղաքականութիւնից Գ. Ծառուկեանի հեռանալուց յետոյ տեսակէտներ էին հնչում, թէ Ս. Սարգսեանն այլեւս անհրաժեշտութիւն չի տեսնում Յ. Աբրահամեանին պահել վարչապետի պաշտօնում, եւ որ այդ կառավարութեան ղեկավարի դերում վերջինիս գոյութեան իմաստը Գ. Ծառուկեանին հնազանդ պահելու մէջ էր: Բայց քանի որ դա Յ. Աբրահամեանի միջոցով չստացուեց, ուրեմն վարչապետի պաշտօնում նրա մնալն արդէն աննպատակայարմար է: Բայց պարզւում է, որ ԲՀԿ-ով Յ. Աբրահամեանը կարող է նոր թափ վերցնել: Եւ եթէ նա իշխանութեան մէջ իր դիրքերը պահում էր խնամու կուսակցութեան միջոցով, հիմա արդէն նա Հանրապետականում կ'ունենայ իր կուսակցութիւնը եւ որպէս ուժ՝ թէկուզեւ թուլացած, բայց կը ծառայեցնի իր քաղաքական ու տնտեսական նպատակներին:

Թէ այդպիսով Յ. Աբրահամեանը որքան ազնիւ կը լինի Գ. Ծառուկեանի հանդէպ՝ դժուար է ասել: Բայց որ նա արդէն փորձում է իր համար քաղաքական յենարան ձեռք բերել՝ ակնյայտ է: ՀՀԿ-ն նրա համար այնքան էլ յենարան չէր, այնպէս, ինչպէս յենարան չէր Տ. Սարգսեանի համար:

«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Քարոզչական նոր յարձակում Թուրքիայից ու Ատրպէյճանից

*ՄԵՍԱՔՍԻԱ ՇԱԼՈՒՆՑ*

Պաքւում պաշտօնական այցով էր գտնւում Թուրքիայի արտգործնախարարը: Թուրքիան եւ Ատրպէյճանը կրկին իրենց միասնական դիրքորոշումն են արտայայտել ղարաբաղեան հարցում ղարաբաղեան հակամարտութեան հարցում: Որպէսզի ցիւրիխեան արձանագրութիւնները «ուժի մէջ մտնեն, Թուրքիան պայման է առաջ քաշում՝ Հայաստանը պէտք է ազատի Ատրպէյճանի օկուպացուած հողերը», յայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Մեւլութ Չաւուշօղլուն:

Ատրպէյճանցի գործընկեր Էլմար Մամեդիարովի հետ համատեղ ասուլիսի ժամանակ Չաւուշօղլուն ասել է, թէ Հայաստանը «չկարողացաւ անցնել անկեղծութեան թեստը, հետեւաբար իր խորհրդարանից արձանագրութիւնների յետկանչը ոչ մի նշանակութիւն չունի»: «Ատրպէյճանը եւ Թուրքիան ցանկանում են, որպէսզի Հարաւային Կովկասը դառնայ խաղաղութեան եւ անվտանգութեան վայր: Սակայն Հայաստանի մտադրութիւններն այլ են: Հարաւային Կովկասը կը վերածուի խաղաղութեան եւ անվտանգութեան վայրի, եթէ Հայաստանը ուղղի իր գործած սխալները եւ յարգելով Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, լքի իր օկուպացրած տարածքները», նշել է Թուրքիայի արտգործնախարարը:

Իսկ Մամեդիարովը որոշել է «բացայայտումներ» անել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջան կատարած վերջին այցելութիւնից: Նա ասել է, թէ՝ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան վերջին այցելութեան ժամանակ առաջարկել են ղարաբաղեան խնդիրը կարգաւորելու նպատակով աշխատանքային խմբեր ստեղծել: Ատրպէյճանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդիարովը թուրք գործընկերոջ՝ Մեւլութ Չաւուշօղլուի հետ հանդիպումից յետոյ կայացած մամլոյ ասուլիսում նաեւ յաւելել է, թէ իրենք պահանջում են, որ բանակցութիւններում առաջին հերթին խօսքը վերաբերի «օկուպացուած» տարածքներից Հայաստանի զօրքերի դուրսբերմանը: «Առաջին հերթին Հայաստանը պէտք է զօրքերը դուրս բերի օկուպացուած տարածքներից: Այդ պատճառով մենք պահանջում ենք համանախագահներից, որպէսզի հրադադարի ռեժիմի խախտման դէպքերի վերաբերեալ բանակցութիւններում խօսքը նախեւառաջ վերաբերի Հայաստանի զօրքերի դուրսբերմանը», ասել է Մամեդիարովը:

Ինչպէս եւ սպասւում էր Ատրպէյճանի արտգործնախարարն անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում ազատազրկման դատապարտուած ատրպէյճանցիներ Դիլհամ Ասկերովին եւ Շահբազ Գուլիեւին վերադարձնելու հարցին՝ նկատելով, թէ այն շարունակում է մնալ իրենց օրակարգում: Մամեդիարովը վստահութիւն է յայտնել, թէ «հայերը չեն կարող երկար պատանդ պահել երկու ատրպէյճանցիներին, եւ վաղ թէ ուշ նրանք վերադարձուելու են»:

Զուշացաւ երէկ պաշտօնական Երեւանի արձագանքը Թուրքիայի եւ Ատրպէյճանի ԱԳ նախարարների յայտարարութիւններին: Այն ասէկօսները, թէ իբր Մինսկի խմբի համանախագահները ատրպէյճանցի դիւերսանտներին Ատրպէյճանին փոխանցելու հարցը բարձրացրել են Երեւանում՝ իրենց վերջին այցելութեան ժամանակ, չի համապատասխանում իրականութեանը, ԱԺ-կառավարութիւն հարցուպատասխանի ժամանակ յայտարարեց ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը: «Եռանախագահները մեզ մօտ այդ հարցը չեն բարձրացրել»,- ասել է Նալբանդեանը՝ յաւելելով.- «Միջազգային հանրութիւնը քաջատեղեակ է, թէ մարդասպաններին ինչպէս են ընդունում եւ հերոսացնում Ատրպէյճանում, ինչպէս դա եղաւ տխրահռչակ Սաֆարովի դէպքում, եւ դա միակ դէպքը չէր»:

Յիշեցնենք, որ այս հարցը վերջերս միջազգային հանրութեան ուշադրութեան կենտրոնում է յայտնուել, հաւանաբար, այն պատճառով, որ պաշտօնական Պաքուն այն դարձրել է հերթական պահանջը, ինչի արդիւնքում վերջերս Միացեալ Նահանգների պետքարտուղարութեան ներկայացուցիչը յորդորեց Լեռնային Ղարաբաղում դատապարտուած Դիլհամ Ասկերովին ու Շահբազ Գուլիեւին վերադարձնել Ատրպէյճանին՝ միաժամանակ նշելով, որ դա մարդասիրական ժեստ է, ինչը նպաստում է լարուածութեան նուազմանը:

«Բնական է, որ քաղաքակիրթ աշխարհը խօսում է

Շար.ը էջ 18

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Տէր-Պետրոսեան. «ՀԱԿ-ին Ժամանակ է Պէտք Իր Մարտավարութիւնը Ճշգրտելու Համար»



*Տեսարան մը Մարտ 1-ի սպանդին տարելիցին առթիւ տեղի ունեցած հանրահաւաքի մասնակիցներէ*

*Հայ Ազգային Կոնգրէսն առնուազն մինչեւ Ապրիլի 24-ը զանգուածային միջոցառումներ չի անցկացնի, Մարտ 1-ին Ազատութեան հրապարակում անցկացուած հանրահաւաքի ժամանակ յայտարարեց ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը:*

*«Ընդդիմութեան դաշտում միակ մնացած ՀԱԿ-ին ժամանակ է պէտք իր հետագայ մարտավարութիւնը ճշգրտելու եւ պայքարի քաղաքական ռեսուրսները հաշուարկելու համար», - ասաց նա:*

*«Բարգաւաճ Հայաստանին» եւ նրա ղեկավար Գագիկ Ծառուկեանին ՀԱԿ առաջնորդն իր խօսքում հպանցիկ անդրադարձաւ, միայն նշեց, որ կուսակցութեան նկատմամբ վայրագ հաշուեյարդար է իրականացուել:*

*«Իրադարձութիւնները դեռ այնքան թարմ են, որ երկար մտորումների եւ հիմնաւոր վերլուծութեան պահանջ են առաջացնում: Յուսով եմ, դուք էլ, ձեր հերթին, ըմբռնումով կը մօտենաք իմ քայլին, քաջ գիտենալով, որ ես հապշտապ դատողութիւններ անելու եւ ոտքի վրայ որոշումներ կայացնելու սովորութիւն չունեմ», - նշեց Տէր-Պետրոսեանը:*

*Առաջին նախագահը, կարճ ժամանակում իշխանափոխութեան հասնելու մասին յայտարարող ընդդիմադիր այլ ուժերի համար ծրագրերն իրականացնելու լաւ առիթ նկատեց, Մարտի 2-ից 16-ին արտոնուած հանրահաւաքները ՀԱԿ-ը տրամադրելով այդ ուժերին:*

*Առաջին նախագահը յիշեցրեց՝ Մարտի 1-ի մեղաւորներին քրէական պատասխանատուութեան ենթարկելու եւ զոհերի հարազատներին նիւթական փոխհատուցում տրամադրելու գործընթացները մազաչափ անգամ տեղից չեն շարժուել:*

*Հայաստանի ներկայիս իշխանութիւնների օրօք Մարտի 1-ն ու Հոկտեմբերի 27-ը, ըստ Տէր-Պետրոսեանի, չեն բացայայտուելու. - «Հայաստանի աւազակապետական իշխանութիւնները, բռնապետութիւններին յատուկ ցինիզմով, չեն էլ թաքցնում, որ թքած ունեն թէ՛ սեփական երկրի քաղաքացիների պահանջների, թէ՛ ընդդիմադիր քաղաքական ուժերի օրէնսդրական նախաձեռնութիւնների, եւ թէ՛նոյնիսկ միջազգային կազմակերպութիւնների՝ ՄԱԿ-ի, ԵԽԽՎ-ի, ԵԱՀԿ-ի եւ Եւրամիութեան ընդունած բանաձեւերի ու յայտարարութիւնների վրայ: Նման պահուածքով նրանք, ըստ էութեան, բացէիբաց յայտարարում են՝ շատ էլ լաւ ենք արել, որ Մարտի 1-ին ժողովրդին գնդակահարել ենք. պէտք լինի, էլի կ՚անենք»:*

*ՀԱԿ միւս ներկայացուցիչները նոյնպէս իրենց ելոյթներում անդրադարձան Մարտի 1-ի թեմային: ՀԺԿ ղեկավար Ստեփան Դեմիրճեանն ասաց՝ Մարտի 1-ի էջը փակուած չէ: - «Մենք չենք կարող համակերպուել այս ամէնի հետ», - յայտարարեց Դեմիրճեանը:*

*Մօտ մէկ ժամ տեւած հանրահաւաքից յետոյ ՀԱԿ ներկայացուցիչները, իրենց համախոհների հետ, երթով Մաշտոցի պողոտայից հասան Երեւանի քաղաքապետարանին յարող հրապարակ, որտեղ էլ 2008-ի Մարտի 1-ի գիշերը տեղի ունեցան 10-ը մարդու կեանք խլած արիւնալի դէպքերը:*

### Ժիրայր Սէֆիլեան. «Կոչ Եմ Անում Օր Առաջ Լծուել Ռեժիմի Հեռացման Գործին»

*«Նպատակայարմար չեմ համարում այս օրերին հակադարձել քաղաքական գործիչներին», - իր Ֆէյսբուքի էջում գրել է Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատար, «Հիմնադիր խորհրդարանի» քարտուղարութեան համակարգող Ժիրայր Սէֆիլեանը՝ անդրադառնալով Հայաստանի առաջին նախագահ, Հայ Ազգային Կոնգրէսի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Մարտի 1-ի ելոյթին:*

*«Մեր ժողովուրդը յոգնել է անիմաստ սենսացիաներից: Դրա ժամանակը չէ: Մենք պէտք է հնարաւորինս շուտ ազգային պետութիւն կառուցենք եւ դառնանք միջազգային յարաբերութիւնների լիարժէք սուբիեկտ: Իսկ դրա համար հարկաւոր է նախ հեռացնել ռեժիմին եւ երկրում հաստատել մեր ժողովրդի կամքն ու իշխանութիւնը: Յապաղելու դէպքում կարող ենք ամէն ինչ կորցնել: Ուստի բոլոր լուրջ եւ մտահոգ մարդկանց կոչ եմ անում օր առաջ լծուել ժողովրդի համախմբման եւ ռեժիմի հեռացման գործին», - գրել է Սէֆիլեանը:*

### Օսկանեանը Դիմում Է Ներկայացրել ԲՀԿ Շարքերը Լքելու Մասին

*Հայաստանի նախկին արտգործնախարար, ԱԺ պատգամաւոր Վարդան Օսկանեանն Մարտ 4-ին դիմում է ներկայացրել «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնից դուրս գալու մասին:*

*«Վարդան Օսկանեանը դիմում է ներկայացրել «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան շարքերը լքելու մասին, բայց տեղեկութիւնը, որ դիմում է ներկայացուած նաեւ Ազգային ժողովի նախագահին մանդատը վայր դնելու մասին, չի համապատասխանում իրականութեանը», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Ազգային ժողովի ԲՀԿ խմբակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը:*

*«Առաջիկայում կուսակցութեան քաղաքական խորհուրդը կը քննարկի մեր շատ յարգարժան գործընկեր Վարդան Օսկանեանի դիմումը կուսակցութեան շարքերը լքելու մասին, եւ ես գրեթէ վստահ եմ, որ կուսակցութիւնը չի բաւարարի մեր յարգելի ընկերոջ դիմումը կուսակցութեան շարքերը լքելու վերաբերեալ: Մեր ցանկութիւնն է, որ պարոն Օսկանեանը չլքի կուսակցութեան շարքերը», - յաւելեց Զոհրաբեանը:*

*Գագիկ Ծառուկեանի հացէին Սերժ Սարգսեանի հնչեցրած կոշտ գնահատականներից յետոյ ԲՀԿ-ից եւ համանուն խմբակցութիւնից արդէն եօթ պատգամաւոր է հեռացել:*

### Շարմազանով.- «Հայաստանին Կառուցողական Ընդդիմութիւն Է Անհրաժեշտ»

*Հայաստանի հասարակութեանը կառուցողական ընդդիմութիւն է անհրաժեշտ: Այդ մասին լրագրողներին ասել է ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ մամուլի քարտուղար Էդուարդ Շարմազանովը: Հարցին, թէ իշխանութեան ինչին է պէտք ընդդիմութիւնը, Շարմազանովը հակադարձել է, թէ ընդդիմութիւնն առաջին հերթին անհրաժեշտ է ժողովրդին:*

*«Կարծիք կայ, որ եթէ իշխանութիւնը վատն է, իսկ ընդդիմութիւնը՝ լաւը, ով ընդդիմութեան կողմից է, ուրեմն ժողովրդի կողմից է: Մենք պէտք է սովորենք տարանջատել, առաջին հերթին՝ պետութիւնը իշխանութիւնից, ընդդիմութիւնը՝ ժողովրդից: Ինչպէս եւրոպական ժողովրդավարութեանմբ դասական երկրներից»,- ասել է Շարմազանովը: Իսկ դրա համար հարկաւոր է գաղափարների պայքար, այլ ոչ անձերի հակամարտութիւն, ասել է նա:*

*«Դա էլ հենց ինստիտուցիոնալ ընդդիմութիւնն է, իսկ այդպիսի ուժեր կան թէ խորհրդարանում, թէ խորհրդարանից դուրս: Ուժեր, որոնց հետ ամէն մի ընտրութիւնը ցնցման չի վերածուի, իշխանութեան կորուստը մահուան, իսկ ընդդիմութեան վերադարձը՝ վրէժի հաւասարազօր չի լինի»,- ասել է նա:*

*«Իշխանութիւնն ու ընդդիմութիւնը երկու թեւեր են: Մէկը լաւ չի, ծուլում է ամէն ինչ: Ուստի մենք շահագրգիռ ենք, որ առողջ լինեն երկու թեւերն էլ»,- նկատել է Շարմազանովը:*

### Հայաստանի Ամենաընդդիմադիր Գործիչներն Են Փոստանջեանը, Յովհաննիսեանն ու Փաշինեանը

*Հայաստանում անցկացուած հարցման արդիւնքների համաձայն, երկրում ամենաընդդիմադիր գործիչների եռեակում են «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը, «Ժառանգութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանն ու ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը:*

*Այս մասին, Մարտի 2-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարել է «Gallup International» ասոցիացիայի հայաստանեան ներկայացուցչութեան տնօրէն Արամ Նաւասարդեանը՝ ներկայացնելով հարցման արդիւնքները, որն անուանել են «Ընդդիմադիր ընեմ»: Նշենք, որ հարցումն անցկացուել է 2014-ի Նոյեմբերի 20-27-ին, որին մասնակցել է 1067 մարդ:*

*Նաւասարդեանի խօսքով՝ հարցման մասնակիցներին առաջարկել են 5-բալանոց սանդղակով գնահատել, թէ որքանով են թուարկուած գործիչներն ընդդիմադիր:*

*«Այստեղ առաջատարը Զարուհի Փոստանջեանը, Րաֆֆի Յովհաննիսեանն ու Նիկոլ Փաշինեանն են, որոնք երեքն էլ հաւաքել են 3,8 բալ: Գագիկ Ծառուկեանը հաւաքել է 3,7 բալ, Նաիրա Զոհրաբեանը՝ 3,7 բալ, Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ 3,6 բալ, Լեւոն Զուրաբեանը՝ 3,4 բալ, Արամ Մանուկեանը՝ 3,3 բալ, Վարդան Օսկանեանը՝ 3,3 բալ, Հրանդ Բագրատեանը՝ 3,2 բալ, Ժիրայր Սէֆիլեանը՝ 3,1 բալ, Ստեփան Դեմիրճեանը՝ 3 բալ, Խաչատուր Քոքոբելեանը՝ 2,9 բալ, Անուշ Սեդրակեանը՝ 2,8 բալ, Պարոյր Հայրիկեանը՝ 2,8 բալ, Յովհաննէս Մարգարեանը՝ 2,5 բալ, Հեղինէ Բիշարեանը՝ 2,3 բալ, Ռոբերտ Քոչարեանը՝ 2,2 բալ եւ Արթուր Բաղդասարեանը՝ 2,2 բալ»,-նշել է Նաւասարդեանը:*

*Մէկ այլ հարցին, մասնակիցների 11 տոկոսը «միանշանակ այո» են պատասխանել, թէ ցանկալի՞ էր Հայաստանի անդամակցումը ԵՏՄ-ին:*

*Ըստ նրա նոյն հարցին «աւելի շուտ այո» է պատասխանել հարցուածների 53 տոկոսը: «Այսինքն, ընդհանուր առմամբ, դա կազմում է մօտ 64 տոկոսը:*

*Յաջորդ հարցին, թէ որքանով ձեր ընտանիքի եւ երկրի վրայ կ՚ազդի ռուսական ռուբլու արժեզրկումը, նաւթի գների անկումը, 45 տոկոսը պատասխանել է, որ վատ կ՚անդրադառնայ: «21 տոկոսը պատասխանել է «աւելի շուտ վատ կ՚անդրադառնայ», այսինքն 66 տոկոսը վատ ազդեցութիւն է կանխատեսել ռուբլու արժեզրկման հետեւանքով:*

*Հարցուածների 88 տոկոսը կարծում է, որ դա վատ կ՚անդրադառնայ Հայաստանի տնտեսութեան վրայ»,- յաւելել է Արամ Նավասարդեանը:*

# ԼՈՒՐԵՐ

## Ռուսաստանի Տնտեսական Վիճակով Պայմանաւորուած՝ Հայաստանից Գաղթը Հնարաւոր է Նուազի

*Վերջին հինգ-վեց տարիներին Հայաստանից տարեկան մեկնել ու չի վերադարձել 30-35 հազար մարդ: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասաց ժողովրդագիր Ռուբէն Եգանեանը՝ նշելով, որ ներկայումս չկան այն միտումները, որոնց հիման վրայ այս թիւը կարող է նուազել:*

*«Հնարաւոր է փոքր-ինչ նուազի Ռուսաստանում եւ Ուկրաինայում կատարուող իրադարձութիւնների ֆոնին: Ռուսաստանի տնտեսական հնարաւորութիւնները սահմանափակւում են, իսկ արեւմուտք գնալու համար վիզային արգելքը Հայաստանի համար շարունակւում է: Միգրացիոն վիճակի մասին այսօր դժուար է հաւաստի դատողութիւններ անել, որովհետեւ վերջին երկու տարիներին ՌԴ-ի կողմից միգրացիոն քաղաքականութիւն է վերանայուել:*

*Ռուբէն Եգանեանը նշեց, որ ՌԴ միգրացիոն քաղաքականութեան փոփոխութեան հետեւանքով միայն անցեալ տարի ՀՀ 200 հազար քաղաքացու մուտք ՌԴ 3-5 տարով արգելափակուեց:*



*Ժողովրդագիր Ռուբէն Եգանեան*

*«Այսօր դիմումներ են գրւում, որպէսզի արգելքը հանուի, բայց յաջողութիւնը կարծես 30% է կազմում: ՌԴ-ի տնտեսական վիճակը վատացել է՝ կապուած Ուկրաինայի հետ ունեցած խնդիրներով եւ դեռ աւելի է վատանալու»,- ասաց նա:*

*Ինչ վերաբերում է սեզոնային միգրանտներին, ապա Ռուբէն Եգանեանը նշեց, որ դեռեւս է 1960-ականներից Հայաստանից տարեկան 30-40 հազար մարդ է մեկնել արտագնայ աշխատանքի, այսօր այդ թիւը հասել է մօտ 100 հազարի:*

*Խօսելով պատճառների մասին, Ռուբէն Եգանեանը նշեց, որ 1997թ-ին կատարուած ուսումնասիրութիւնների համաձայն արտագաղթի առաջին պատճառը աշխատատեղերի բացակայութիւն էր, այնուհետեւ ցածր վարձատրութիւնը, որից յետոյ միայն բարոյահոգեբանական մթնոլորտը. Ներկայումս այս հերթականութիւնը փոխուել է:*

*«2003թ-ի ուսումնասիրութիւններով առաջին տեղում է եկել աշխատավարձի ոչ բարձր լինելը, երկրորդ տեղում՝ բարոյահոգեբանական խնդիրներ են՝ արդարութեան բացակայութիւն, օրէնքի գերակայութեան բացակայութիւնը եւ այլն: Աշխատանքի բացակայութեան խնդիրը յայտնուել է 3-րդ կամ 4-րդ տեղերում»,- ասաց նա:*

## «Միացեալ Նահանգները Շարունակում է Մնալ Հայաստանի Բարեկամը»



*ԱՄՆ դեսպանը եւ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակեան հանդիպումի ընթացքին*

*ՀՀ ԱԺ Նախագահ Գալուստ Սահակեանը Մարտի 4-ին ընդունել է Հայաստանում Ամերիկայի Միացեալ Նահանգների արտակարգ եւ լիազօր դեսպան Ռիչարդ Միլսին:*

*Գալուստ Սահակեանը շնորհաւորել է դեսպանին Հայաստանում դիւանագիտական առաքելութիւն սկսելու կապակցութեամբ: ԱԺ Նախագահը յոյս է յայտնել, որ դեսպանի գործունէութիւնը կը նշանաւորուի հայ-ամերիկեան յարաբերութիւնների առաւել սերտացմամբ:*

*Խորհրդարանի ղեկավարը կարեւորել է ԱՄՆ-ի հետ յարաբերութիւնների զարգացումը եւ տարբեր ոլորտներում համագործակցութեան խորացումը: Գալուստ Սահակեանը բարձր է գնահատել Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակութեան ամրապնդմանը, բարեփոխումների իրականացմանն ու տնտեսական զարգացմանն ուղղուած ԱՄՆ-ի շարունակական աջակցութիւնը: Նա կարեւորել է նաեւ Միացեալ Նահանգների դերակատարութիւնը տարածաշրջանային անվտանգութեան, կայունութեան պահպանման, ինչպէս նաեւ Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացում՝ որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր:*

*Խօսելով Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումների մասին՝ Ազգային Ժողովի Նախագահը նշել է, որ ոգեկոչման արարողութիւններին ակնկալւում է ԱՄՆ բարձրաստիճան պատուիրակութեան մասնակցութիւնը: Գալուստ Սահակեանն անդրադարձել է նաեւ Հայաստան-ԱՄՆ միջխորհրդարանական կապերին եւ ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսաւորուող Հայաստանի Ազգային Ժողովին աջակցման ծրագրին, որը մեկնարկել է 2012 թուականին:*

*Դեսպան Ռիչարդ Միլսը հաւաստիացրել է, որ Միացեալ Նահանգները շարունակում է մնալ Հայաստանի բարեկամը եւ վճռական է տրամադրուած տարածաշրջանում խաղաղութիւնը պահպանելու գործում:*

*Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումներին՝ դեսպանը նշել է, որ ամերիկեան ժողովուրդը հայ ժողովրդի կողքին է եւ գիտակցում է ոգեկոչման միջոցառումների կարեւորութիւնը, ինչպէս աշխարհի բոլոր բարի կամքի տէր մարդիկ են այն գիտակցում:*

## Էրտողանին Դատապարտել են Բարեկամութեան Արձանը Հրէշաւոր Անուանելու Համար



*Էրտողանի հրահանգով քանդուած բարեկամութեան յուշարձանը*

*Թուրքական դատարանը մեղաւոր է ճանաչել Թուրքիայի նախագահ Ռեջէփ Թայիփ Էրտողանին տարիներ առաջ Կարսում գտնուող հայ-թուրքական բարեկամութեանը նուիրուած յուշարձանը հրէշաւոր անուանելու համար:*

*Թուրքական «Mynet» կայքի փոխանցմամբ՝ թուրքական դատարանը բաւարարել է Կարսում գտնուող Բարեկամութեան Յուշարձանի հեղինակ, յայտնի թուրք քանդակագործ Ահմեդ Աքսոյի հայցն ընդդէմ Թուրքիայի այն ժամանակուայ վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրտողանի դէմ՝ պարտադրելով, որ Էրդողանը 10 հազար թուրքական լիրա բարոյական փոխհատուցում վճարի քանդակագործին:*

*NEWS.am-ը աւելի վաղ տեղեկացրել էր, որ 2011-ի Յունուարին Թուրքիայի այն ժամանակուայ վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրդողանը Կարս կատարած այցի ժամանակ «հրէշաւոր» էր անուանել հայ-թուրքական բարեկամութեան նուիրուած յուշարձանը եւ հրահանգել քանդել այն:*

*Կարսի նախկին քաղաքապետ Նաիֆ Ալիբեյօղլուն տարիներ առաջ նախաձեռնել էր հսկայ արձանի ստեղծումը, որը պէտք է խորհրդանշէր հայ-թուրքական բարեկամութիւնը եւ խաղաղութիւնը: Սակայն 2009-ին քաղաքապետի ընտրութիւններում նա պարտութիւն կրեց: Անաւարտ արձանը անորոշ ճակատագրով տեղադրուեց Կարսի հին հայկական թաղամասին կից գտնուող բարձունքում:*

*Էրտողանի հրահանգից ամիսներ անց Կարսի քաղաքապետարանը ապամոնտաժեց Բարեկամութեան յուշարձանը:*

## Միկա Բաղդասարովի Թիկնապահը Եղել է Բերձորի Ծեծի Հրամանատար

*Բերձորում Հիմնադիր Խորհրդարանի դէմ վայրագութիւնների կազմակերպիչներից մէկը գործարար Միկա Բաղդասարովի թիկնապահն է եղել:*

*Հիմնադիր Խորհրդարանը հաղորդագրութիւն է տարածել, որում ասւում է. «Բերձորում տեղի ունեցած դէպքերի կապակցութեամբ մօտ մէկ ամիս առաջ նշանակուած ծառայողական քննութիւնն այսօր աւարտուել է: Լրատուամիջոցներին չի յաջողւում որեւիցէ մեկնաբանութիւն ստանալ Արցախի իշխանութիւններից:*

*«Հիմնադիր Խորհրդարանը արդէն տեղեկացրել էր, որ պետական մակարդակով կազմակերպած ծեծին մասնակցում էին քրէական տարրեր եւ իշխանութեան իւրայինների ստուկներ: Նկարում պատկերուած անձը գործարար Միկա Բաղդասարովի թիկնապահներից է, ով Բերձորեան ծեծի ժամանակ ուղորդում էր թեւկապներով երիտասարդներին եւ ոչ միայն:*

*Մեքենայի համարանիշը բաւարար կարող է լինել ոստիկանութեան համար պարզելու, թէ ով է այս անձը եւ ինչպէս եւ ինչու է նա յայտնուել Բերձորեան ծեծի օրը այդ վայրում: Եթէ Արցախի ոստիկանութիւնը պայմանագրային հիմունքներով համագործակցում է գործարարների թիկնազօրի անդամների հետ եւ վերջիններիս ծեծուջարդը խաղաղ քաղաքացիների հանդէպ բխում է ԼՂՀ օրէնքներից, ապա մեկնաբանութիւնները թողնում ենք Ձեզ, յարգելի ընթերցող»:*

## ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ԵՒ ԺԱՆ ՕՂԱՍԱՊԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԹԱՄՄԱՄ ՍԱԼԱՄԻ ՀԵՏ



Լիբանանի Պետական երեսփոխաններ ընկ. Սեպուհ Գալփաքեան եւ Ժան Օղասապեան Ուրբաթ Փետրուար 27-ին այցելեցին վարչապետարան ու տեսակցեցան վարչապետ Թամմամ Սալամի հետ, քննարկելու համար երկրի ընդհանուր զարգացումները, քաղաքական եւ ապահովական հարցերը, ինչպէս նաեւ հայութիւնը հետաքրքրող թղթածրարները: Անդրադառնալով ներքին լիբանանեան իրավիճակին, ընկ. Գալփաքեան եւ Օղասապեան շեշտեցին կառավարութեան նիստերու գումարումը շարունակելու անհրաժեշտութիւնը՝ քննարկելու համար օրակարգային թղթածրարները եւ լուծումներ գտնելու քաղաքացիները յուզող հարցերուն:

Այն ինչ կը վերաբերի կառավարութեան մէջ որոշումներ հրապարակելու մեթոտի բարդոյթին, ապա երեսփոխանները կոչ ուղղեցին հարցը հանգուցալուծել Սահմանադրութեան յօդուածները եւ կանոնները գործադրելով:

Ընկ. Գալփաքեան եւ Օղասապեան նշեցին, որ պէտք չէ անդամալուծել երկրին մէջ գործունեայ մնացած միակ հաստատութիւնը եւս: Եսեփոխանները անհրաժեշտ համարեցին նոր նախագահի մը շուտափոյթ ընտրութիւնը:

Անոնք վարչապետ Սալամի հետ արծարծեցին նաեւ հայութիւնը հետաքրքրող թղթածրարները եւ մասնաւորաբար անդրադարձան Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչումին:

Պետական երեսփոխաններ ընկ. Գալփաքեան եւ Օղասապեան ներկայացուցին Լիբանանի մէջ կայանալիք ոգեկոչման հանդիսութիւնները, անոնց խորհուրդն ու կարեւորութիւնը, նաեւ Հայաստանի մէջ պետական մակարդակով կայանալիք պաշտօնական ձեռնարկները, որոնք տեղի պիտի ունենան օտարերկրացի բարձրաստիճան պատասխանատուներու եւ պաշտօնատարներու ներկայութեամբ:

## ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ ՄԱՅՔ ԿԱԹՕ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՒ «ՄԽԻԹԱՐ ԳՕՇ» ՇՔԱՆՇԱՆՈՎ



Շաբաթ, Փետրուարի 28ին, 2015, Լոս Անճելոսի Հայաստանի Հիւպատոսարանին մէջ, ընտրանի հասարակութիւն մը հրաւիրուած էր ներկայ գտնուելու Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգիսեանի կողմէ Գալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի անդամ հայասէր Մայք Կաթոյի «Մխիթար Գօշ» շքանշանի տուչութեան արարողութեան:

Աւագ հիւպատոս Սերգէյ Սարգիսով խօսք առնելով ողջունեց Մայք Կաթոյի ներկայութիւնը եւ բարձր գնահատեց ԱՄՆ-ի եւ Հայաստանի փոխ-յարաբերութիւններու զարգացման եւ Արցախի Հանրապետութեան ճանաչման գծով իր ունեցած դրական եւ օգտաշատ ներդրումը: Առ այդ Հայաստանի կառավարութեան կողմէ առ ի գնահատանք զինք պարգեւատրեց «Մխիթար Գօշ» շքանշանով:

Շնորհակալական ջերմ խօսքերով հանդէս եկաւ Մայք Կաթօն եւ ըսաւ պարգեւատրումի այս արարողութիւնը զիս շատ յուզեց: Ասիկա իմ կեանքիս ամենաերջանիկ պահերէն մին կը նկատեմ: Կարելիս ի գործ պիտի դնեմ առաւել եւս զարգացնելու երկու երկիրներու բարեկամական կապերը:Ｙ

## ՖՐԱՆՍԱ
## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՍԴՀԿ ՆԱԶԱՐԲԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՍՈՒՄԿԱՅԻԹԵԱՆ ՋԱՐԴԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՐՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ

Փարիզեան շրջանի, Արֆորվիլ քաղաքի, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնատեղի, Հայ Երիտասարդական կեդրոն ՀԵԿ-ի մէջ, Ուրբաթ, Փետրուար 27, 2015ին, կազմակերպութեամբ ՍԴՀԿ ՆԱԶԱՐԲէԿ Երիտասարդական Միութեան, տեղի ունեցաւ, Փետրուար 27-29, 1988ին տեղի ունեցած Սումկայիթեան Ջարդերուն ոգեկոչումը:



ԼՂՀ-ի ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեան

Կազմակերպիչ միութեան անունով խօսք առաւ Սեւակ Սարիգախա, որ ներկայացնելէ առաջ օրուան բանախօսին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցիչ, Յովհաննէս Գէորգեանին, հրաւիրեց ներկաներուն յոտնկայս յարգել յիշատակը զոհուածներուն: Ան իր խօսքին մէջ յիշեցուց, թէ Սումկայիթեան Ջարդերը հայ ժողովուրդին մէջ արթնցուց Ցեղասպանութեան մութ յիշողութիւնը:

Միր Կաթին ընկերութեան արտադրած «Soumgait, un crime impuni» վաւերագրական շարժապատկերին ցուցադրութենէն ետք,



ՍԴՀԿ ՆԱԶԱՐԲԷԿ Երիտասարդական Միութեան անդամները Յովհաննէս Գէորգեանի հետ

բեմ հրաւիրուեցաւ օրուան բանախօսը: Ան համառօտ ներկայացուց Ջարդերուն նախօրէին ընկերային իրավիճակը Ատրպէյճանի Սովետական հանրապետութեան մէջ: Ընթերցեց Պերնար Քուշների «La Trage'die de Soumgait» SEUIL հրտ. վերապրողներու վկայութիւններէն: Հաստատեց Ջարդերուն կանխամտածուած եւ ծրագրուած հանգամանքը:

Բանախօսութիւնը շարունակուեցաւ հարցում ու պատասխանի դրութեամբ: Ան անդրադարձաւ Ալիեւեան տոհմին շահագրգռութեանը իրավիճակին ճահճացման մէջ, սահմանային վտանգներուն ու ընդհարումներուն մասին, զոհերու թիւին մասին, հակամարտութեան լուծման դանդաղ յառաջընթացին մասին եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տնտեսական աճին մասին:

Այն հարցումին թէ ֆրանսահայ երիտասարդը ինչ ձեւով կրնայ «Օգտակար ըլլալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան», Յովհաննէս Գէորգեան ողջունեց մի քանի օրեր առաջ ՍԴՀԿ ՆԱԶԱՐԲէԿ Երիտասարդական Միութեան կազմակերպած բողոքի ցոյցը «Խոճալուի Ջարդեր»ը ոգեկոչող նուագահանդէսին դէմ եւ բացատրեց կարեւորութիւնը այցելելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն կապ հաստատելու Ղարաբաղցիին հետ, անդրադարձաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան քաղաքական «ներկայութեան» մասին շնորհիւ՛ «Ֆրանսա-Ղարաբաղ Բարեկամութեան Միութեան» որ կը համախմբէ 40ի մօտ ֆրանսացի քաղաքական գործիչներ, ըլլան անոնք երեսփոխան կամ ծերակուտական եւ ինչպէս նաեւ զարկ տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ տարբեր քաղաքապետարաններու միջեւ «Բարեկամութեան Հրովարտակներ»ու ստորագրութեան որ կ՛ամրապնդէ կապը եւ համագործակցութիւնը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ այդ քաղաքներուն:

Ձեռնարկի աւարտին խօսք առաւ ՍԴՀԿի Ֆրանսայի շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ՝ Գէորգ Սաչլեան: Ան յիշեցուց ԵԱՀԿի, Մինսկի խումբի առաքելութիւնը, այդ խումբին արձանագրած «յաջողութիւնները» եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան վերադարձի կարեւորութիւնը բանակցութիւններու սեղան իբր լիիրաւ բանակցող:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՀԱԶԱ՛Ր ՀԱՄԲՈՅՐ ՀԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ

*ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ*

Լիբանանի մէջ հրատարակուող հայ քաղաքական երեք կուսակցութիւններու պաշտօնաթերթերու խմբագիրները, յետ խորհրդակցութեան, որոշած են Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով հրատարակել ԱԶԴԱԿ-ԱՐԱՐԱՏ-ԶԱՐԹՕՆՔ միացեալ թիւ, Ապրիլ 24-ի օրը:

Ինչ հաճելի լուր եւ համազգային ոգի ու կեցուածք՝ Հայ Սփիւռքի սիրտ Պէյրութէն:

Ինչ դաստիարակիչ գործակցութիւն եւ եղբայրակցութիւն՝ հայ իրաւապահանջ սերունդներուն:

Ինչ ազգային առողջ մտածում՝ հաւաքաբար ներկայացնելու իրար ամբողջացնող մտքերը մեր:

Շատոնց կը խօսուէր համազգային մէկ շարժումի մը ստեղծումին մասին, որուն մէջ կ՚առաջարկուէր լուծել մեր աւանդական ազգային երեք կուսակցութիւնները, որպէսզի մէկ ձայնով հետապնդէինք մեր բոլոր ազգային հարցերը: Օրերը եկած են ցոյց տալու, որ մեր Սփիւռքը բաժնող ու բզքտող ամօթալի ու խղճալի անցեալը սկսած է փոխարինուիլ ներկայով մը, որուն մէջ մեր երեք աւանդական կուսակցութիւնները կ՚աշխատին համաշունչ եւ անխոչընդոտ ծրագիրներով, տալով այն տպաւորութիւնը թէ անոնք իրենց սերտ գործակցութեամբ արդէն ստեղծած են այն համազգային համախմբուած շարժումը որուն մասին շատոնց կը խօսուէր:

Յիսուն տարի առաջ, 1965-ին, Ապրիլեան Եղեռնի յիսնամեակին առթիւ, լիբանանահայութիւնը հարիւր հազար թիւով հաւաքուած էր Պէյրութի Քամիլ Շամուն կոչուող մարզական աւանին մէջ, իր համայնքային բոլոր գոյներու եւ խաւերու ներկայացուցիչներով, հիմը դնելու պահանջատիրութեան ամրոցի մը, որուն մէջ գինուորագրուեցան Հայ Դատի բանակին առաջատար սերունդները: Այդ հերոս սերունդը տուաւ Գաղտնի Բանակ եւ Արդարութեան Մարտիկներ, եւ մեզի հանդէպ անտարբեր եղող ու քնացող աշխարհին հանգիստը խանգարեց: Այդ հայաշունչ սերունդը աշխարհով մէկ սփռուած հայութեան տուաւ ազգային գործիչներ եւ ուսուցիչներ ու դարձաւ պապէն աւելի պապական՝ այն ինչին հանդէպ որ ազգային իրաւունքներու պահանջատիրութեան հետ գործ ունէր: Այդ սերունդը Լիբանանի քաղաքացիական պատերազմին ընթացքին «դրական չէզոքութիւն» կոչուող իմաստուն դիրքորոշում բռնեց եւ իր համայնքին կեանքը փրկեց, ու յետ պատերազմին ալ ամէնուն կողմէ գնահատուեցաւ ու իր չէզոքութեան որպէս վարձատրութիւն իրեն քաղաքական ներկայացուցչութեան հաւասար կարգավիճակ տրուեցաւ՝ անոր կուսակցութիւններուն միջեւ բաժնելով պետական երեսփոխանական աթոռները: Այդ սերունդը իր մասնակցութիւնը բերաւ Արցախի ազատագրութեան մարտերուն եւ ազգային հողի վրայ արիւն թափեց:

Ահա այդ սերունդի ազգային դաստիարակութեամբ սնած եւ ուռճացած ներայացուցիչները մեր լիբանանեան համայնքին որոշած են մէկ ձայնով խօսիլ Ապրիլ 24-ի օրը եւ մէկ լեզուով լսելի դարձնել իր ենց ձայնը: Լիբանանեան հակադիր քաղաքական հոսանքներու հետ ըլլալու անոնց հանգամանքը երբեք պատճառ չէ եղած որ անոնք մէկ կողմ չդնէին ամէն տեսակի հաշիւ եւ գինակցութիւն, որպէսզի մէկ եւ ամբողջական երեւոյթ ստանար իրենց միասնականութիւնը ազգային առաջատար հարց եւ նիւթ նկատուող մեր ազգային հասարակաց շահի եւ դատի նկատմամբ: Ծիծեռնակաբերդի մէջ հաւաքուած հայրենի հայութեան ձայնին Սփիւռքի մէջ ամենէն զօրաւոր ու բարձր ձայնակիցը վստահաբար պիտի ըլլայ Պէյրութի մէջ հազարներով քալող հայութիւնը, որ Ապրիլ 24-ի օրը ձգած գործ ու տեղ Ապրիլեան Եղեռնի հանդիսութեան ընթացքին բռունցք պիտի բարձրացնէ Թուրքիոյ դէմ հաշիւ պահանջելով անկէ, հաշիւ՝ իր նահատակ նախնիներու կորսնցուցած հողին ու ինչքին: Անցեալ շաբթուայ մեր յօդուածը՝ «Գոնէ Արարատը Տրուէր Մեզի», վստահաբար պիտի չգրուէր եթէ Լիբանան գտնուելով կեցած ըլլայինք պահանջատիրութեան առաջին շարքերուն վրայ, ուր սրբազան «խենթեր» կը մերժեն ընդունիլ ուժերու անհաւասարակշռութեան պատճառաւ իրապաշտական լուծում գտնել մեր դատին: Մեր դպրոցական օրերէն բոլորս գիտենք Արշակ Թագաւորին պատմութիւնը, թէ ան ինչպէս հայկական հողի վրայ կանգնած կը դառնար յանդուգն ու անգիջող եւ ապա պարսկական հողին վրայ կանգնած կը դառնար գիջող ու տկար: Նորօրեայ մեր Արշակները գուցէ գտնուին հայրենի հողի եւ անոր մօտ եղող Լիբանանի հողին վրայ եւ ոչ՝ հոնկէ ովկիանոսներ հեռու գտնուող վայրերու մէջ: Այո՛, ըլլալով հեռու Հայաստանէն եւ Սփիւռքի հայրենիք՝ Լիբանանէն, հեռու ենք հողի ուժէն, եւ մեր օթեակներէն արեւմտավայել մտայնութեամբ կը դիտենք ու կը ցանկանք լուծում մեր հարցերուն:

Հոն, մեր հողին վրայ եւ անոր հողին մօտ կանգնողները միայն իրաւունք ունին ըլլալու յանդուգն եւ անգիջող, ըսելու եւ երգելու՝ «երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար»:

Այդ հնարը գտան ատենօք Լիբանանէն դէպի Եւրոպա եւ Թուրքիա գացող մեր պահանջատէր «խենթերը»: Այդ հնարը կ՚ուզեն գտնել ներկայիս Լիբանանի եղբայրացած մեր ազգային կուսակցութիւնները:

Հազա՜ր համբոյր Հայ Լիբանանին:

# ՖԱՇԻԶՄԸ ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՊԻՏԱԿՈՎ

*ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ*

Ռուս ճանաչուած հրապարակախօս Իլյա Էրենբուրգը Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին ասել է, թէ՝ պատերազմում միլիոնաւորները զոհուեցին, բայց փրկուեց մէկը՝ ֆաշիզմը: Պատերազմից ընդամէնը 70 տարի անց, դրա կենդանութեան նշանները ոչ միայն նկատելի են, այլեւ ազդեցութիւնն աւելի ու աւելի գերակայ է որոշ երկրների քաղաքական օրակարգում:

Նացիզմը ոչ միայն չի նահանջել, այլեւ խորքային առումով շրջանառւում է առաւել հիստերիկ ու ցինիկ, ալյատեացութեան եւ ատելութեան աննախադէպ դրսեւորումներով: Վերջին շրջանում միայն Ատրպէյճանում Հայաստանի ու հայերի թեմայի շուրջ նիւթերում ու սիւժեներում աւելի յաճախ կարելի է հանդիպել հայհոյանքների, կոպիտ եւ վիրաւորական արտայայտութիւնների: Ալիեւեան ռեժիմը ջանք չի խնայում հայատեաց տրամադրութիւններ ձեւաւորելու, դրա համար յաճախ դիմելով այնպիսի քայլերի, որոնք իրենց անբարոյ բովանդակութեամբ անհաղորդ են առողջ տրամաբանութեանը:

Ինչպէս նշում է «Ենի մուսաւաթ» թերթը, հայատեացութիւնն Ատրպէյճանում վերածուել է համաժողովրդական զբաղմունքի: Անգամ ատրպէյճանական Moderator.az կայքը, ելնելով մասնագիտական էթիկայի ու լրագրողական մշակոյթի տեսանկիւնից, հարցադրել է, թէ որքանով է ճիշտ եթերում նման արտայայտութիւններ հնչեցնելը, յաւելելով. «Արդեօ՞ք ատրպէյճաներէնն այնքան աղքատ լեզու է, որ Հայաստանի նկատմամբ ունեցած ատելութիւնն ու վրդովմունքը հնարաւոր չէ փոխանցել առանց հայհոյանքի ու վիրաւորանքների»: Սակայն գլուխգործոցը «Գիւնդալիք Բաքը» թերթի հիմնադիր եւ գլխաւոր խմբագիր Հաբիլ Ալիեւի խոստովանութիւնն է. «Ես հայերին իմ մշտական թշնամին եմ համարում: Որտեղ հայ տեսնեմ՝ լեզուն կտրելու եմ: Եթէ անգամ ինձ կտոր-կտոր անեն, հայերին մշտապէս ատելու եմ: Եթէ մէկ անգամ էլ մասնակցեմ պատերազմին, նրանց երեխաներին անգամ չեմ խնայելու»: Եւ սա ատրպէյճանական ֆաշիզմի ամբողջական դիմագիծը չէ:

Ատրպէյճանը խնդիրներ ունի նաեւ ներսում: Բռնակալ իշխանութեանը յենուած ռեժիմը, ում համար կենցաղի մակարդակում է պատմութեան վերաշարադրումն ու իրականութեան խեղաթիւրումը, մարդու հիմնարար իրաւունքների խախտումն ու քսենոֆոբիան, ինքնադրսեւորման իւրաքանչիւր շարժում դատապարտում է աներեւակայելի խոշտանգումներով եւ բանտարկութիւններով, ինչն էլ միջազգային վարկանիշային կազմակերպութիւններին մղում է Ատրպէյճանին «այլախոհների նկատմամբ անհանդուրժող, քաղաքացիական ազատութիւններն ու քաղաքական իրաւունքները ոտնահարող երկիր» որակել: Սակայն ֆաշիզմին յատուկ է նաեւ ողջամտութեան նկատմամբ խլութիւնն ու ամենաէականը՝ ռեւանշիզմը: Ատրպէյճանի տարածքային հաւակնութիւնները Հայաստանի, Իրանի եւ Վրաստանի նկատմամբ նոր չեն:

Վերջերս էլ պատմաբան պատգամաւոր Եաղուբ Մահմուդովը պարզել է, որ «Հիւսիսային Ատրպէյճանը Ռուսաստանին միացնելու արդիւնքում «Իլսուի» սուլթանութեան գրեթէ կէսն անցել է Դաղստանի շրջանին: Անջատելով 11 գիւղ Ատրպէյճանից եւ միացնելով դրանք Դաղստանին՝ վերջինիս բաժին է հասել այդ թւում Ջար-Բելոքան շրջանի մեծ մասը: Այդ պատճառով ոչ ոք չի կարող ժխտել, որ Դերբենտը ատրպէյճանական քաղաք է, քանի որ Դաղստանը կազմաւորուել է ատրպէյճանական հողերի վրայ»: Ասել կ՚ուզի՝ խելագարութեան մեխանիզմը աշխատում է: Եւ «արդարութիւնը» վերականգնելու համար ազերիները գինւում են, առանց հաշուի առնելու՝ ինչն ինչ է եւ ինչն ինչի կը բերի: Մինչդեռ ֆաշիզմը միշտ զոհեր ու աւերածութիւններ է բերում, շատ զոհեր ու շատ աւերածութիւններ, որից յետոյ է բարեհաճում լքել այդ տարածքը՝ ուրիշ աւելի յիմար բռնապետ ու մոլորուած ժողովուրդ գտնելու:



# Ո՞Վ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԷՐՏՈՂԱՆԻ ՄՈԼԵՌԱՆԴ ԲՌՆԱԿԱԼ ԴԱՌՆԱԼՈՒՆ

*ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ*

Երբ 2002 թուականին Թուրքիոյ մէջ իշխանութեան գլուխ եկաւ Արդարութիւն եւ Բարգաւաճում կուսակցութիւնը, բարեպաշտ մահմետականի տպաւորութիւն կը ձգէր անոր հիմնադիր Ռեճէփ Թայիփ Էրտողանը, որ կը ձգտէր վերացնել կաշառակերութիւնը եւ բարելաւել Թուրքիոյ քաղաքացիներու կենսամակարդակը:

Վերջին 13 տարիներուն ընթացքին, Էրտողան աստիճանաբար վերածուեցաւ կաշառակեր բռնակալի՝ ժամանակակից օսմանեան սուլթանի հովերով տարուած: Արդեօք ի սկզբանէ ան եղա՞ծ է գառնուկի մորթ հագած գայլ, թէ չփացած է միջազգային հանրութեան կոյր աջակցութեան եւ շռայլ գովասանքներուն պատճառով: Յատկանշական է, որ Նախագահ Օպամա Էրտողանը կ՛անուանէր մէկը աշխարհի այդ հինգ ղեկավարներէն, որոնց հետ ինք յատուկ մտերմութիւն ունի: Օպամա եւ այլ պետութիւններու ղեկավարները վերջապէս հասկցան, որ իրենց ստեղծած հրէշը դուրս եկած է շիշէն եւ վերահսկողութենէ: Էրտողանի հանդէպ վստահութեան չարաշահման գլխաւոր զոհը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ՝ Սուրիոյ Նախագահ Պաշշար Ասատը:

Էրտողանի եւ Թուրքիոյ ղեկավարներուն ամբարտաւան դառնալը ցոյց կու տան ստորեւ գրուած հատուածները, որոնք առնուած են անոնց վերջին հրապարակային ելոյթներէն եւ որոնք ներկայացուած են Մերձաւոր Արեւելքի լրատուամիջոցներու հետազօտութիւններու հիմնարկին կողմէ:

Յունուար 21ին, Պոլսոյ մէջ կայացած Իսլամական երկիրներու միջխորհրդարանական միութեան համաժողովին, Էրտողան իր ճառով աւելի շատ նմանեցաւ Իսլամական պետութեան առաջնորդի մը, քան՝ ՆԱԹՕի անդամ պետութեան նախագահի, կոչ ուղղելով մահմետական երկիրներուն՝ «միաւորուելու եւ պարտութեան մատնելու Արաբական Լորանսի յետնորդները, որոնք կը ձգտին քայքայել Միջին Արեւելքը»: Ան մեղադրեց Արեւմուտքը իսլամական աշխարհին դէմ դաւադրութիւն կազմակերպելուն եւ մահմետականներու եղբայրասպանութեան պատճառ դառնալուն համար:

Վերջերս Ճիպութի կատարած իր այցելութեան ժամանակ, Էրտողան պարծանքով ըսաւ. «Թուրքիան հզօր երկիր է: Եթէ դուք (Եւրոմիութիւն) Թուրքիան դեռ կը դիտէք որպէս երկիր մը, որ պիտի աղաչէ ձեր (ԵՄ) դրան սեմին, ապա Թուրքիան աղաչող երկիր չէ»: Ի պատասխան Թուրքիոյ մէջ լրատուամիջոցներու դէմ կիրարկուած պատժամիջոցներուն վերաբերեալ կատարուած եւրոպական քննադատութեան՝ Էրտողան յայտարարեց ԵՄ ղեկավարներուն. «Ձեզի պահեցէք ձեր գաղափարները… Բարի եղէք գալ Թուրքիա, որպէսզի Թուրքիան ձեզի ժողովրդավարութեան դասեր տայ»:

Թուրքիոյ փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշ, ուղեկցելով Էրտողանին՝ Ափրիկէ կատարած ճամբորդութեան ընթացքին, անամօթաբար գործածեց ցեղապաշտութեան քարտը՝ դիմելով տեղացիներուն. «Օսմանեան կայսրութեան անկումէն ետք, ափրիկեցիները առաջին անգամ կը տեսնեն սպիտակ ձեռք, որ չի շահագործեր, չի ստրկացներ կամ բռնութեամբ չի հարուածեր անոնց գլուխը. սպիտակ ձեռք, որ չի շահագործեր անոնց հանքերը, չի վերացներ անոնց արժէքները, չի ձուլեր զանոնք կամ չի դիտեր որպէս ստորադաս արարածներ: Անոնք կը տեսնեն Թուրքիոյ սպիտակ ձեռքը, որ զիրենք կ՛ընդունի որպէս հաւասար եւ եղբայր… Մենք կը փորձենք օժանդակել այս սեւամորթ, բայց ջերմ սիրտ ունեցող մարդոց վերածնունդին»: Քուրթուլմուշ հաւանաբար յոյսով էր, որ իր ափրիկեան ունկնդիրները անտեղեակ պիտի ըլլան, թէ Էրտողան յաճախակիօրէն կ՛օգտագործէ «զէնճի» (սեւամորթ) նսեմացուցիչ եւ ցեղապաշտական եզրը՝ ցած դասակարգի մարդիկ բնութագրելու համար…

Զուգելով ամբարտաւանութեամբ եւ կրօնական մոլեռանդութեամբ ետ մնալ Էրտողանէն եւ Քուրթուլմուշէն՝ վարչապետ Տաւութօղլու անցեալ ամիս, Ցիւրիխի մէջ տեղւոյն Թուրք բնակչութեան բազմամարդ հանրահաւաքին յայտարարեց. «Իսլամութիւնը Եւրոպայի բնիկ կրօնն է եւ պիտի շարունակէ այդպէս մնալ: Հակառակ խոչընդոտներու, նախապաշարումներու եւ բազմաթիւ սադրանքներու, Թուրքիա պիտի շարունակէ քալել ԵՄ անդամակցութեան ուղիով… Ալլահին ողորմածութեամբ, մենք երբեք չենք խոնարհեր մեր գլուխը: Մենք թոռներն ենք Կալիփոլիի մէջ մարտնչած հերոսներուն, որոնք երբեք չեն խոնարհած իրենց գլուխը: Երբ 2002ին մենք եկանք իշխանութեան

Շար.ը էջ 18

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՇԱՐՔ

## 8-9-10 ԱՊՐԻԼ 2015-ԻՆ, ՍՔԻՐՊՈԼ ՍԵՆԹԸՐԻ ՄԷՋ

*ՀՐԱՉ ՍԵՓԵԹՃԵԱՆ*

Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի տնօրէն Դոկտոր Հայկ Դեմոյեանի նորագոյն հատորը՝ »Հայոց Ցեղասպանութեան Լուսաբանումը Համաշխարհային Մամուլի Առաջին Էջերին« (Armenian Genocide: Frontpage Coverage in the World Press) շառաչուն ապտակ մըն է համայն մարդկութեան: Արթնութեան հրաւէ՛ր, զգաստութեան կա՛նչ՝ բոլոր անոնց, որոնք սիրել գիտեն, ապրիլ գիտեն, ունին խիղճ եւ ազնուութիւն:



Միջազգային տարբեր թերթերու արխիւներէն դուրս եկած այս գծանկարներն ու լուսանկարները ոչ միայն որպէս գիրք, այլ՝ որպէս Ցուցահանդէս, յառաջիկայ ամիս, 8-9-10 Ապրիլ 2015-ին, կազմակերպութեամբ Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետներու վարչութեան, Երեւանէն պիտի բերուին Քալիֆորնիա եւ պիտի ներկայացուին Լոս Անճելըսի հանրութեան «Սքիրպոլ» Մշակութային Կեդրոնին մէջ (Skirball Cultural Center, 2701 North Sepulveda Blvd, Los Angeles, CA 90049, երեկոյեան ժամը 6-10, դասախօսութիւնները կը սկսին ժամը 7:30-ին): Բացառիկ առիթ է այս, հրաւիրելու հայ թէ օտար մեր բարեկամները, ներկայ գտնուելու եռօրեայ դասախօսական շարքին եւ Ցուցահանդէսին, որ բաց եւ ազատ է հանրութեան դիմաց՝ «Ինչ Բանի Աշխարհը Ականատես Դարձաւ Դար Մը Առաջ» ընդհանուր խորագիրին տակ: Եւ այսպէս,

- Չորեքշաբթի, 8 Ապրիլ 2015.

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ ԲԱՑՈՒՄ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Բարեգալուստի խօսքեր, ելոյթներ պաշտօնական հիւրերու կողմէ. խօսք՝ Տոքթ. Յարութ Եաղսըզեան, Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետներու վարչութեան ատենապետ, գլխաւոր բանախօս՝ Դոկտ. Հայկ Դեմոյեան, Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի տնօրէն, Երեւան:

- Հինգշաբթի, 9 Ապրիլ 2015.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Դասախօսութիւն անգլերէն լեզուով՝ "Economics of the Armenian Genocide and its consequences". դասախօս՝ Դոկտ. Ուկուր Ումիթ Ունկոր (Associate Professor of History Utrecht University, Institute of War, Holocaust, and Genocide Studies, Amsterdam, The Netherlands): Երեկոն կը համադրէ՝ Պրն. Գուրգէն

Շար.ը էջ 18



# ԹՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ ՏՊԱԳՐՈՒԱԾ՝ ՀԱՅԵՐԸ ՏԵՂԱՀԱՆԵԼՈՒ ԵՒ ՍՊԱՆՆԵԼՈՒ՝ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐՈՒ ՀՐԱՄԱՆԸ

*Թուրքիոյ Պետական խորհուրդի անդամ, իրաւաբան եւ «Անկլոֆիլ ընկերակցութեան» հիմնադիր Սաիթ Մոլլան 1918 թուականին սկսած էր հրատարակել «Թրքական Սթամպուլ» օրաթերթը: »1919թ. Մարտի 25-ին թերթը հրապարակած է Միութեան եւ Յառաջդիմութեան կեդրոնական գրասենեակի՝ Յատուկ յանձնաժողովին յանձնարարական նամակը: Ան կը վերաբերէր Հայոց ցեղասպանութեան ժամանակ հայերու տեղահանութեան :*

*Թերթը այդ նամակը կոչած է «Ողբերգական եւ սարսափելի փաստաթուղթ» եւ նշած, որ ան վերահրատարակուած է առանց որեւէ փոփոխութեան:*

*Յանձնարարական նամակը բաղկացած էր 10 յօդուածներէ, որոնք քայլ առ քայլ կը նկարագրէին բոլոր այն գործողութիւնները, որոնք պէտք է գործադրուէին հայերու տեղահանման ընթացքին: Ասոնք բոլոր այն գործողութիւններն են, զորս նկարագրած էին գիտնականներ Թաներ Աքչամը, Տոնալդ Պլոքսհամը եւ Ուղուր Ումիթ Ունկյորը որպէս տեղահանութեան մէկ մաս,- կը գրէ* The Armenian Weekly*՝ պարբերականը:*

*«Թրքական Սթամպուլը» չէ նշած նամակին աղբիւրը, աւելին՝ Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պահոցները անհետացած էին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Օսմանեան կայսրութեան պարտութենէն ետք: Սակայն, անկախ այս ամէնէն, ուշագրաւ է, որ գոյութիւն ունէին օսմանեան թրքական պարբերականներ, ինչպէս էին «Թրքական Սթամպուլը», «Ալեմտարը», «Փեյամը», որոնք կը քննարկէին եւ կը քննադատէին «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութիւնը Առաջին համաշխարհային պատերազմէն ետք:*

*Փաստաթուղթին դրոյթները՝ ստորեւ.*

Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող տարբեր ազգութիւններու եւ կրօնքներու պատկանող բազմաթիւ անձեր, տեղեկագրեր ղրկեցին իրենց կառավարութիւններուն, կազմակերպութիւններուն եւ բարեկամներուն: Այդ վաւերագրերուն մէջ արձանագրուած են հեղինակներու ականատեսի ցնցիչ վկայութիւնները Հայոց Ցեղասպանութեան մասին: Վերոյիշեալ վկայութիւններուն մէկ մասը համադրուեցաւ Լորտ Ճէյմս Պրայսի եւ մեծանուն պատմաբան Արնոլտ Թոյնպիի կողմէ եւ որպէս Բրիտանական կառավարութեան պաշտօնական հրատարակութիւն՝ լոյս տեսաւ 1916-ին, Լոնտոնի մէջ, "The Treatment of the Armenians Under the Ottoman Empire» («Հայերու հանդէպ Օսմանեան Կայսրութեան [ցուցաբերած] վերաբերմունքը«) խորագրով, որ քաղաքական շրջանակներուն ծանօթ է նաեւ «The Blue Book» («Կապոյտ Գիրք») անունով:

Հակառակ այն իրողութեան որ այդ անհերքելի վաւերաթուղթերուն զգալի մէկ մասը հաւաքուած ու համադրուած է անգլիացի, եւրոպացի, ամերիկացի եւ հրեայ հեղինակաւոր մտաւորականներու, պատմաբաններու եւ քաղաքական գործիչներու կողմէ, դուք կը մերժէք ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը եւ անով իսկ կ'աջակցիք հայկական ցեղասպանութիւնը թաղելու Թուրքիոյ նախաձեռնած աշխատանքներուն: Յիշեցնենք ձեզի որ հայկական կոտորածները պատերազմի ընթացքին դաշնակից պետութիւններու՝ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ կողմէ բնութագրուեցան որպէս «մարդկութեան դէմ ոճիր», որ այսօր համապատասխան է «ցեղասպանութիւն» հասկացողութեան:

Հազարաւոր ականատեսի վկայութիւններէն եւ վաւերաթուղթերէն միայն մի քանի հատը կ'ուզեմ յանձնել ձեր ուշադրութեան, մատնանշելով միաժամանակ որ անոնց հեղինակները եղած են բարձր սկզբունքի եւ արժանապատուութեան տէր մարդիկ:

«Բրիտանական Կառավարութիւնն այսօր կը մերժէ ճանչնալ հայերու ցեղասպանութիւնը:... Բայց չ՞է որ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց Նախարարութիւնը հայոց ցեղասպանութիւնը հաստատող մեծ քանակութեամբ փաստաթուղթեր հրատարակեց 1916- ին: Հայոց ցեղասպանութիւնը չճանչնալ՝ կը նշանակէ մեղանչել այն քաջ անհատներու դէմ, որոնց ականատեսի վկայութիւնները խնամքով արձանագրուած են հեղինակաւոր մասնագէտներու կողմէ. անոնց վերլուծումներն ու եզրակացութիւնները այսօր ալ կը մնան ի զօրու:»

ERIC EVEBURY

Քաղուած Նոյեմբեր 2000 Թուականին Լորտերու Պալատի մէջ «Կապոյտ Գիրք»ի 3-րդ հրատարակութեան առթիւ ունեցած ելոյթէն:

«Ապտուլ Համիտ եւ Երիտասարդ Թուրքերը հայկական նահանգներու մէջ առաջացած դժուարութիւնները հարթելու համար կանխամտածուած ծրագրով որոշեցին աքսորելով բնաջնջել իրենց կողմէ անհաւատ ու դաւաճան նկատուած ամբողջ ազգ մը»:

DAVID LLOYD GEORGE

Մեծն Բրիտանիայի Վարչապետ

Քաղուած «Յուշեր Խաղաղութեան Վեհաժողովէն» գիրքէն, որ լոյս տեսաւ 1939-ին:

*****

«Թրքական Կառավարութիւնը 1915-ին սկսաւ անգթօրէն իրագործել հայոց չարահամբաւ ընդհանուր տեղահանութիւնն ու կոտորածը Փոքր Ասիոյ մէջ: Երեքէն չորս հարիւր հազար մարդիկ, կանայք եւ երեխաներ կարողացան փախչիլ Ռուսիոյ ենթակայ շրջաններ, ուրիշներ՝ Պարսկաստան եւ Միջագետք. սակայն ցեղի մաքրագործումը Փոքր Ասիայէն եղաւ ամբողջական, ինչքան որ կարելի էր, իր տարողութեամբ նման հսկայ արարք մը ամբողջացնել: ... Պատճառ չկայ կասկածելու որ այս ծրագրուած ոճիրը գործադրուեցաւ քաղաքական նպատակներով: Առիթը ներկայացած էր Թրքական հողը մաքրելու քրիստոնեայ ազգէ մը» (ընդգծումը Ա. Կ.):

WINSTON CHURCHIL

Քաղուած է «Աշխարհի Տագնապը», հատոր 5, «The Aftermath» գիրքէն, որ հրատարակուած է 1929-ին:

*****

Իմ հարցումս պրն. Քամերոնին հետեւեալն է.

-Չըրչիլի հաստատումը կ'ընդունի՞ք որպէս ճշմարտութիւն:

Եթէ ձեր պատասխանը դրական է, ուրեմն, որպէս անոր հետեւորդներէն մէկը, դուք ալ քաջութիւնը պէտք է ունենաք ընելու նոյնը:

«Պիթլիսի նահանգին մէջ գործուած Թրքական վայրագութիւններն անկարելի է նկարագրել: Նահանգի բոլոր հայ մարդիկը ջարդելէ յետոյ՝ Թուրքերը շրջակայ գիւղերէն հաւաքեցին 9000 կանայք եւ երեխաներ եւ երկու օր յետոյ զանոնք քշեցին Տիգրիսի ափը եւ բոլորը գնդակահարելէ ետք՝ ինը հազար դիակ նետեցին գետը»:

ARNOLD J. TOYNBEE

Անգլիացի համբաւաւոր պատմաբան

Քաղուած է « Հայոց Դէմ Գործուած Վայրագութիւնները» գիրքէն, որ լոյս տեսաւ Լոնտոն, 1915-ին:

*****

Մարդկային իրաւունքներու մասնագէտ, հեղինակաւոր իրաւաբան Ջեֆրի Ռոպըրթսըն, 2014ին հրատարակեց «Անմեղ Ցեղասպանութիւն մը. ո՞վ հիմա կը յիշէ հայերը » խորագրով գիրքը: Վստահ եմ ծանօթ էք մարդկային իրաւանց նուիրուած անոր գիրքերուն: Ռոպերթսըն հայոց ցեղասպանութեան հետ առնչուած փաստաթուղթերը մանրակրկիտ քննութեան ենթարկելէ յետոյ, առանց դոյզն կասկածի կու գայ այն եզրակացութեան, որ Օսմանեան Կայսրութեան մէջ Ա. Աշխարհամարտի ընթացքին տեղի ունեցած ահաւոր դէպքերը, հայերը ոչնչացնելու նպատակով պետութեան կողմէ կազմակերպուած բռնագաղթն ու ջարդերը, կարելի է միայն ցեղասպանութիւն որակել: Ռոպերթսըն քննադատելով Մեծն Բրիտանիոյ եւ ԱՄՆի կառավարութիւններու կեղծաւորութիւնը, կ'ընէ հետեւեալ հաստատումը.

«...Դեմոկրատ երկիրներու քան ազգային պետութիւններու խորհրդարանները քուէարկութեամբ ճանչցած են Հայոց Ցեղասպանութիւնը, բայց Բրիտանիան եւ ԱՄՆ կը խուսափին [ընել նոյնը] ՆԱԹՕ-ի իրեց դաշնակիցը չվշտացնելու համար»:

GEOFFREY ROBERTSON

«Անմեղ Ցեղասպանութիւն մը. ո՞վ հիմա հայերը կը յիշէ»:

*****

«... Հայերու դէմ գործադրուած վերջին եւ ամենադաժան միջոցառումները եղան անոնց ընդհանուր եւ ամբողջական բռնագաղթը դէպի անապատ եւ այդ աքսորին ընկերակցող ճամբու սարսափները : ... Դատելով գործածուած մեթոտներէն եւ ջարդուածներու քանակէն, այս կոտորածը մարդկային պատմութեան եզակիօրէն ամենասարսափելին է»:

HENRY MORGENTHAU

Օսմանեան Կայսրութեան մօտ Միացեալ Նահանգներու դեսպան (1913-1916).

Քաղուած՝ «Դեսպան Մորկենթաույի Պատմութիւնը» գիրքէն, որ լոյս տեսաւ 1919-ին:

*****

Բացի Հէնրի Մորկենթաուէն, շատ ուրիշ ամերիկացի դիւանագէտներ եւ ականատես վկաներ տեղեկագրեր ներկայացուցած են Ամերիկեան Կառավարութեան Հայոց Ցեղասպանութեան մասին: Տես Արա Սարաֆեանի «Միացեալ Նահանգներու Պաշտօնական Վաւերաթղթերը Հայոց Ցեղասպանութեան Մասին «գրքի Ա. Հատոր», Ուոթըրթաուն, 1993: ("United States Official Documents on Armenian Genocide», volume one, published in Watertown 1993):

*****

«Հայկական Ջարդը պատերազմի մեծագոյն ոճիրն էր եւ Թուրքիոյ դէմ քայլ չառնելը [կը նշանակէ] համաձայն ըլլալ անոր հետ»:

THEODORE ROOSEVELT (1918)

*****

Տեղին կը նկատեմ այս առթիւ յիշեցնել ձեզի, պր. Նախագահ, ձեր ըրած յայտարարութիւնը 19/01/2008-ին, Նախագահական ընտրարշաւի ժամանակ.

«Իմ հաստատ համոզումն է որ հայոց ցեղասպանութիւնը զրպարտութիւն մը՝ անձնական կարծիք մը կամ տեսակէտ մը չէ, այլ ընդարձակօրէն վաւերագրուած իրողութիւն՝ մեծաքանակ պատմական ապացոյցներով հաստատուած: Իրողութիւններն անուրանալի են: Որպէս Նախագահ՝ պիտի ճանչնամ հայոց ցեղասպանութիւնը»:

BARAK OBAMA

*****

Գտնուեցան բազմաթիւ ազնիւ Թուրքեր, ոմանք՝ Օսմանեան կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաներ, ինչպէս՝ Ճելալ Պէյ, Ֆաիք Ալի Օզանսոյ, Ռէշիտ Փաշա, Թահսին Պէյ, Ֆերիթ Պէյ, Մեհմէթ Ճեմալ Պէյ, Սապիթ Պէյ, Մասըր Պէյ, Հիւսէյն Նասիմի Պէյ, անուններու յաջորդականութեամբ՝ կառավարիչներ Քոնիայի, Քոթահիայի, Քասթամոնուի, Էրզրումի, Պասրայի, Եոզկաթի, Պաթմանի եւ Ակորայի, որոնք մերժեցին գործադրել կենդրոնական կառավարութիւնէն ստացուած հրահանգները եւ որպէս հետեւանք՝ հեռացուեցան իրենց պաշտօններէն եւ փոխարինուեցան «աւելի հնազանդ պետական պաշտօնեաներով», որոնք լիուլի կատարելով իրեց յղուած հրամանները, ամբողջութեամբ բնաջնջեցին վերոյիշեալ նահանգներու հայութիւնը:

«Երբ կը փորձես նկարագրել ոճրագործներու կատարած վայրագութիւնը, գրիչը ձեռքիդ մէջ կը դողայ: Աշխարհի դժուարութիւններուն անգիտակ հրեշտակային ժպիտով անմեղ մանուկներ, որոնք կարօտ են սիրոյ եւ քնքուշ քունի իրենց մօր գրկին մէջ, անգթօրէն կը խլուին իրենց մայրերէն եւ կացինի ուժգին հարուածի հետեւանքով արիւն կը հոսի անոնց աչքերէն արցունքի փոխան եւ Թուրք մսագործներն անընդհատ կը ծիծաղին խնդագին իրենց իսկ արարքներուն վրայ եւ միաժամանակ կը ստիպեն որ միւս մահուան սպասողներն ալ խնդան իրենց հետ: Ինչպէ՞ս կարելի է նկարագրել նման խենդենալիք վայրագութիւն, առանց ամբողջ մարմնով ու հոգիով սարսռալու:

MEVLAN ZADE

Երիտասարդ Թուրք Կուսակցութեան ղեկավար անդամներէն մէկը, որուն յուշերը՝ "Turkeye Intikabini Ic Yuzi» խորագրով գիրքով լոյս տեսաւ 1929-ին, Հալէպի մէջ:

*****

Ստորեւ կու տանք պաշտօնական վճիռը, զոր Թուրքիոյ Օսմանեան կառավարութեան զինուորական ատեանն արձակեց 5 Յուլիս, 1919-ին, Հայկական Ցեղասպանութիւնն իրագործողներու դէմ.

«Նախարար Թալաթ Փաշա եւ պատերազմական նախարար Էնվեր Էֆէնտի, այժմ վտարուած զինուորական ասպարէզէն, նաւատորմի նախարար Ճեմալ Էֆենտի, նոյնպէս վտարուած իր պաշտօնէն, կրթական նախարար Տոքթ. Նազիմ, ասոնք էին գլխաւոր ոճրագործները (fayili asli), որոնց յանցանքը քուէներու միաձայնութեամբ հաստատուած է:

Հետեւաբար, օրէնսգրքի վերոգրեալ պարբերութեան համաձայն, Թալաթ, Էնվեր, Ճեմալ եւ Տոքթ. Նազիմ այսու կը դատապարտուին մահուան»:

Այս վճիռն առաջին անգամ հրատարակուեցաւ պաշտօնական Gazette-ի մէջ, (Takvim-I-Vekayi)

Շար.ը էջ 20



# ՏԻՐ
## Հայոց Հին Հաւատքի աստուած

*ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Հայոց աստուածները իրենց մէջ կրում են բնութեան որեւէ իմաստութեան՝ սիրոյ, զօրութեան, գեղեցկութեան, մայրութեան, հիւրընկալութեան, ողջախոհութեան, արդարութեան գերագոյն խորհուրդ:*

*Ուխտագիրք Արորդաց*

ՏԻՐԸ՝ Հայոց Նախնիների դպրութեան ու ուսման, գրի, պերճախօսութեան, գիտութիւնների, արուեստների, բանաստեղծութեան հովանաւորող աստուածն էր: Նա հանդիսանում էր Հայր Արամազդ գերագոյն աստուծոյ գրիչը կամ քարտուղարը ու նաեւ ատենադպիրը: Նրա պատուին կառուցուած մեհեանը գտնւում էր Արտաշատ ոստանի նախկինում զբաղեցրած տարածքին մօտիկ վայրում: Այն կոչւում էր «Արամազդի Գրչի Դիւան կամ Գիտութիւնների ուսուցման մեհեան եւ երազամոյն տաճար»: Արամազդ աստուծոյ քարտուղար՝ Տիր աստուծոյ գրասենեակն էր այն եւ միաժամանակ գիտութիւնների ուսուցման վայր: Այնտեղ էին հեթանոսական կրօնի պաշտօնակատար քուրմերին գիտութիւն ու դպրութեան իմաստութիւնն էին ուսուցանում: Տիրը, նաեւ մարդկանց ճակատագրերի գուշակն էր, նրանց երազների մեկնաբանը, չար ու բարի գործերի գրանցողը, ննջեցեալներին «Անդրշիրիմեան Աշխարհ» ուղեկցողը: Տօնահանդէսներ էին կատարում Տիր աստուծոյ պատուին, որոնք կոչուել էին Տիրական:

Արմին-հայերի Տիր աստուածը ննջեցեալներին ուղեկցել է դէպի անդրշիրիմեան աշխարհ, մարդկանց հոգիների անմահութիւնն է այն: Զրադաշտը իր ուսմունքի հոգու անմահութեան գաղափարը արդեօք չի՞ քաղել Տիր աստուծոյ իմաստնութիւնից եւ ինչո՞ւ ոչ: Իսլամի ու այլ կրօնների ուսմունքներում էլ կրկնուել են բազում նոյնանման հաւատալիքներ: Տիր աստուծոյ ու Միհրականութեան բազում իմաստութիւններ վերագրուած են որպէս «Աստուծոյ Որդիի» հաւատքի ճշմարտութիւններ:

Տիր աստուծոյ անունով՝ «Տրէ» են կոչել հայոց հին տօնացոյցի չորրորդ ամիսը: Միհրը, Նար Ծովինարի հետ արեւից պայթած հազար գոյներից գօտի հիւսել, այն որպէս Նարօտ կապել երկրի մոլորակի մէջքին եւ ի պատիւ Տիր աստուծոյ այն Տիրական կոչել: Նրա անունով են կոչուել Տիրինկատար լեռը, Տիրակատար քաղաքը, Տրէ ու Տիրառիճ գիւղերը: Արմէն-հայերը իրենց հետ տարան Տիր աստուծոյ իմաստութիւնը, մինչեւ հիմա էլ Տիր աստուծոյ անուան բառարմատից կազմուած իրենց որդեաց անձնանունները կոչում՝ Տիրան, Տիրատուր, Տիրայր, Տրդատ, Տիրոց, Տիրիբաղ, Տիրամայր, Տիրացու եւ Տիրինկատար լեռը, Տիրակատար քաղաքը, Տրէ ու Տիրառիջ գիւղերը: Եւ Աստուծոյ Որդիի Եբրայեցի մայր, սրբագոյն անմեղ կոյս Մարիամին կոչել են Տիրածին, Տիրամայր: Տիր-ի մայր եւ Տիր-ին ծնող մանչը՝ Յիսուսը, Արմին-հայերի Տի՞ր աստուծոյ որդին էր...: Կարող Պարթեւ Անակի որդի Սուրէն-Գրիգորի «Վարք»-ի ու հայոց աշխարհում Նոր հաւատքի ընդունման ու տարածման պատումն է գրել հայոց պատմագիր Ագաթանգեղոսը: Իր մատեանում, անաչառ պատմագիրի վարքին անյարիր գովքի խօսքով՝ փառաբանել նրան: Յիշատակել բազում ոչ ճշմարիտ դէպքեր, Սուրբ-Գրիգորի, արեւմուտքում երեւելի կրթութիւն ստացած հայոց Տրդատ Գ. արքայի մասին:Ագաթանգեղոսը, այլ «քանդումների» հետ իր մատեանում յիշատակել նաեւ Տիր աստուծոյ տաճարը փլելու մասին հետեւեալ տեղեկութիւնը: «Ապա ինքն իսկ թագաւորը, ամբողջ զօրքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժուեց գնաց Արտաշատ քաղաքը, աւերելու այնտեղ Անահիտ դիցուհու բագինը եւ նաեւ այն տաճարը, որ Երազամոյն կոչուած տեղում էր գտնւում: Նախ, ճանապարհին հանդիպեցին քրմական գիտութեան դպիր, Արամազդ-Որմիզդ գրչի Դիւան կոչուած, Երազացոյց, երազահան պաշտամունքի «Տիր աստուծոյ իմաստութեան ուսման մեհեան» եւ ամէնից առաջ սկսեցին այն քանդել, այրել, աւերել»:

Տիր աստուծոյ նուիրուած հրաշակերտ տաճար է եղել նաեւ Վաղարշապատի մօտ: Փլել են նաեւ այն, սպաննել Տիր աստուծոյն նուիրուած արարումը, վար բերել նրա կամարների ու որմերի խաղողի քարացած ողկոյզները, պոկել բոսոր արիւն հոսող պայթած նռները, քաղել Աստղիկի արիւնով շաղագունած վարդերը: Տաճարը հայոց նախնիների արարման իմաստութեան խոյանքն էր:

«Քրմական գիտութեան դպիր» ի՞նչ եղաւ այդ գիտութիւնը: Այրեցին նրա մատեանները, որ արեւորդիների աստուածների լոյսը չգնար աշխարհներ, որ այն չարունակէր լուսաւորել Հայկական լեռնաշխարհը: «Արամազդ՝ հայոց աշխարհում նոր հաւատքը դաւանելուց յետոյ, նրան կոչել են Որմիզդ``: Գրչի դիւանի աստուածը ինչպէ՞ս էր գրել, ո՞ւր է նրա գիրը: Հացեկաց չէնի քրմապետ Վարդանի իմաստուն զաւակ Մեսրոպը պիտի գնար Եդեսիա քաղաք, որտեղ գտնւում էր հին մատեանների խոշոր գրապահոց: Ո՞վ իմանայ, Մաշտոցի այնտեղ յօրինած նշանագրերը տեղի որեւէ մատեանում յիշատակուած չէի՞ն կարող լինել: Այնտեղ էր, որ իր մտատանջ խռով մտքի ու իր սրտի ծովակների արեան փոթորիկով մրրկած հոգու տեսիլքով պիտի երեւային իրեն «Նախնիների» նշանագրերը եւ արթուն մտքով մագաղաթին պիտի դրոշմէր նրանց: Հայոց նոր հաւատքի Աստուածը ինչո՞ւ Եդեսիայում նշանագրեր պիտի պարգեւէր Մեսրոպին եւ ոչ թէ «Որդի Քրիստոսի» լոյսով արարուած տաճարում:

Եօթերորդ դարում, Տիր աստուծոյ տաճարի փլած որմերի վիրաւոր վէմերից պատել են երկյարկանի, արեգակի լոյսին ժպտացող, քարէ սիւների վրայ բազմած հոյակերտ կամարներով, նրանց վրայ պայթած նռներով, որթատունկերի ոստերին ժպտացող, արեւի կրակով հրդեհուած կարմիր ողկոյզներով Նոր հաւատքի յիսուն մեթր բարձրութեան երեք յարկանի, կլոր շրջագծով փառահեղ տաճար եւ այն Զուարթնոց կոչել: Արդեօք այն նմանակը չէ՞ր եղել «Հեթանոս» նախնիների Տիր աստուծոյ բանաստեղծութեան հէքիաթի լոյսի հանճարից յառնած քանդուած տաճարին: Կարող էր, նրանք քանդել ու կրկնօրինակել էին Մուսասիրի Խալդի-Հայկ աստուծոյ եւ այլ աստուածների պատուին պատած մեհեանների կառոյցները, որոնք գնացին աշխարհներ, դառնալու համաշխարհային ճարտարապետութեան խոյանքի հիմքը:

Իրեն Աստուծոյ մարգարէ հռչակած Արաբիայի Մոհամմէտը, պատգամել ցեղակիցներին դուրս գալ անապատներից, արշաւել աշխարհի չորս դին, պարտադրել իր ուսմունքը: Նաեւ հասան հայոց արարչական լեռնաշխարհ, մտան Տիր աստուծոյ Զուարթնոց տաճար, խարոյկներ վառեցին նրա խորանների առաջ, նրա կամարները կրող սիւները ջերմից չդիմացան, ընկաւ տաճարը: Ենթադրւում են նաեւ, որ կարող էր հայոց լեռնաշխարհի ցաւի ահագնացած դողից յառնած երկրի շարժումից ընկել էր տաճարը:

Երկրի արեւմտեան կողմի մի Արմին-Հայ տաղանդաշատ ճարտարապետ այր, հաւաքել վէմերը, չափագրել, թղթի վրայ պատկերել Տիր-Զուարթնոց տաճարը: Կամարների վրայ յենած յարկեր, որոնց վրայ դեռ խաղողն է ժպտում, նուռն է արիւն կաթում, վարդերն են բուրում: Հազար-աշխարհներից, հազար-հազար մարդիկ գալիս են սքանչանալու՝ Տիր-Զուարթնոց տաճարի սիւների վրայ տիրաբար բազմած կամարներով, նրանց վրայ ժպտացող խաղողի, նուռերից կաթող աստղերի կրակի լոյսով, վառուող վարդերի ծիածանով, նրա ճարտարապետական կառոյցը արարող մարդկանց հանճարի ճախրանքով: Ես, «Մուսաների Լեռան» լանջերի շէներից երկիր վերադարձած տարեց Արմին մի այր, բազում անգամներ կանգնել նրա առաջ, սքանչացել արեւորդի նախնիներիս հանճարի սխրանքի թռիչքով, խոնարհել Արմէն-հայերի Տիր աստուծոյ երկրի մարդկանց իմաստութեանը:

Հայկազուն Արտաշէսեանների գահատոհմի Արմին-Հայ հայկազուն թագաւորները, որպէս առաջաւոր արարում, յունական մշակոյթը տարածել, եւ ուսուցանել Արմինա-Հայաստանում: Արմէն-հայերի Տիր աստուծոյ իմաստութիւնը նոյնացրել յունական դիցաբանութեան լոյսի, արուեստների, տիեզերքի անհունների կրակի լոյսից քաղած բանաստեղծութեան աստուած՝ Շւինի-Զեւս աստուծոյ որդի՝ Ապոլոնի հետ:

Արմին-Հայ արեւորդի մարդ, քեզ պատմեմ, ինչպէս էր Տիր-Ապոլոնը իր ինն Մուսա քոյրերի հետ թռել էին հեռու տաք ծովի ափերի կանաչ լեռների վրայով, գնալու համար հանդիպակաց լեռան վրայ պատած Զեւս հայր աստուծոյ տաճար: Ի պատիւ Ապոլոնի ու իր ինն Մուսա քոյրերի, տեղաբնիկները այդ լեռները անուանել էին «Մուսաների պաշտամունքի լեռներ»: Արեւելքի արքաների-արքայ, Արմինա-Հայաստանի հայկազուն արորդի, արածին հայրենապաշտ Մեծն Տիգրանի աթոռանիստ Անտիոք քաղաքի արքունի մատեանում, Մուսաների պաշտամունքին նուիրուած այդ լեռների լանջերին Հայկ Նահապետի արեւորդիների պատած շէները անուանուել էին՝ «Մուսաների Լեռ», շէները՝ «Մուսաների Լեռան շէներ»: «Տիր աստուծոյ իմաստութեան ուսման մեհեան», այրեցին հայոց նախնիների իմաստութիւնը, այրեցին Արմէն-հայերի մտքի երեւակայութեան թռիչքի ճախրանքի մատեանները, սպաննեցին հայոց լեռնաշխարհի բնիկ աստուածներին, քանդողները օտար էին, ի՞նչ փոյթ նրանց համար, արմինների հազար-հազար տարիների իմաստութիւնը, ափսոս եղեւ:

Իմաստուն Պատմահայր հայրենանուէր, հայրենապաշտ Մովսէսը, հայոց Արմինա աշխարհի Արա-Արայեան, Երուանդունի ու Արտաշէսեան գահատոհմերի թագաւորներին է միայն «Հայկազուն» անուանել, հաւաստելով, որ նրանք «Բնիկ»-ներ էին: Այո, արշակունիների Նախավերջին Վռամշապուհ թագաւորը հայոց գրերի արարումը հովանաւորեց, սակայն այն ստեղծողը Տարօն աշխարհի Հացեկաց չէնի քրմապետ Վարդանի զաւակն էր, թարգմանչաց ժամանակի իմաստուն մարդիկ էլ Մեսրոպի ուսուցանած Արմէն-հայերն էին, Նարեկը եւ Արմինա աշխարհի բոլոր իմաստուններն ու իրենց Աստուծոյ սպասաւորները Արմին-հայեր էին. . . վերջ: Արմէն-Հայ, քու ցեղի «Ասք»-ի մատեանի տխուր էջերից է այս, կարդա՛ այն, քու սերունդին է վերապահուած պահելու քեզ ժառանգ մնացած հայրենի հողի այս փշուրը, պահպանի՛ր զարմիդ գոյատեւելու կամքի ոգին:

## ՆՈՐ ԳԻՐՔ
## «ԿԵԱՆՔԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՇԱՌԱՒԻՂՆԵՐ»




Շնորհակալութեամբ ստացանք ծանօթ բանասէր-բանահաւաք, կրթական գործիչ՝ Յովսէփ Նալպանտեանի նոր հատորը «Կեանքի շարունակուող շառաւիղներ» անուանումով, 252 մեծադիր էջերէ բաղկացած, խնամուած տպագրութեամբ: Հատորին մէջ մէկտեղուած են հեղինակին վերջին տարիներու գրի առնուած զանազան նիւթերու առնչուող յօդուածներ, ակնարկներ, որոնք տարբեր տարիներու ընթացքին լոյս տեսած են Պէյրութի «Արարատ», Գահիրէի «Ջահակիր», Լոս Անճելոսի «Մասիս» թերթերուն մէջ: Յովսէփ Նալպանտեան ցարդ հրատարակած է 20 գիրքեր, զանազան թեմաներով: Սակայն անոր «Լոյս» հանրագիտարանները բացառիկ հատորներ են, որոնց մէջ ամփոփուած են բազմաթիւ տեղեկութիւններ վերջին 20 տարիներու ընթացքին լոյս տեսած կրթական հաստատութիւններու եւ տպագրական կազմակերպութիւններու եւ ազգը յուզող հարցերու շուրջ:

## ՆՈՒՌԻ 7 ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նուռի օգտակար յատկութիւններուն մասին առասպելներ կը պատմուին: Կ'ըսուի, որ եթէ պարբերաբար նուռ ուտէք, ձեր սիրտը կ'աշխատի ժամացոյցի նման, իսկ ծերութիւնը ձեզի կը հասնի շատ աւելի ուշ, քան դուք կը սպասէիք:

Նուռը կը պարունակէ 12 ամինաթթուներ, որոնց 5-ը անփոխարինելի են: Այսինքն դուք զանոնք չէք գտներ այլ պտուղներու մէջ: Նուռը նաեւ հարուստ է K, C, B9 եւ B6 կենսանիւթերով, ինչպէս նաեւ հանքանիւթերով՝ ֆոսֆորով եւ կալիումով: Ասոնց հետ մէկտեղ նուռը ցած ջերմուժ ունեցող պտուղ է:

Նուռի 7 օգտակար յատկութիւնները.

1.Նուռը կ'ամրապնդէ սիրտը: Նուռը կը պարունակէ պունիկալագին ու մեծ քանակով հակաթթուներ, որոնք մտնելով մարմնի մէջ կ'ամրապնդեն սիրտը: Մասնագէտներու խօսքով, պունիկալագինը եւ հակաթթուները կ'ամրացնեն երակներուն պատերը եւ կ'իջեցնեն վատ քոլեսթերոլի մակարդակը:

2.Նուռը կը պաշտպանէ քաղցկեղէն: Նուռը կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կը խոչընդոտեն չարորակ գոյացութիւններու ձեւաւորումը: Նուռին մէջ գտնուող հակաթթուները եւ հակաբորբոքային նիւթերը թոյլ չեն տար զարգացումը չարորակ գոյացութիւններու բջիջներուն: Հետեւաբար քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը կը նուազի:

3.Նուռը կը բարձրացնէ մարմնի դիմադրողականութիւնը: 100 կրամ նուռը կը պարունակէ 21 տոկոս C կենսանիւթ, որ մարմնին անհրաժեշտ է մէկ օրուան ընթացքին: Նուռը կ'աշխուժացնէ դիմադրողական համակարգը՝ պաշտպանելով մարմինը տարատեսակ վարակներէ: Մասնագէտները կը նշեն, որ օրը մէկ նուռի 6-րդ մասը ուտելու պարագային՝ դիմադրողականութիւնը կը բարձրանայ 3 անգամ:

4.Նուռը կը բարելաւէ մարսողութիւնը: Սննդային հիւսուածքները (fiber), որոնք կը պարունակէ նուռը, այնպիսի տարրեր են, որոնք մարմինը չի մարսեր: Փոխարէնը այդ հիւսուածքները կ'օգնեն չէզոքացնելու ճաշի »անպէտք մնացորդները«: 100 կրամ նուռը կը պարունակէ 16 կրամ սննդային հիւսուածք, որ մարմնին անհրաժեշտ չափաբաժնի ծիրին մէջ է: »Աւելորդութիւններ«-էն ազատիլը կը նպաստէ մարսողութեան համակարգին:

5.Նուռը կը բարձրացնէ հեմոկլոպինի մակարդակը: Հեմոկլոպինը երկաթ պարունակող սպիտակուց է, որ կ'օգնէ մարմնին թթուածինը հասցնելու հիւսկէններուն: Եթէ հեմոկլոպինի մակարդակը ցած է մարդու մօտ՝ սրտխառնուք, գլխապտոյտ եւ թուլութիւն կը նկատուի: Նուռը կը բարձրացնէ հեմոկլոպինի մակարդակը: Անիկա յաճախ խորհուրդ կու տան օգտագործել անեմիայի պարագային: Օրը երեք գաւաթ նուռի հիւթը բաւարար է հեմոկլոպինը կարգաւորելու համար:

6.Նուռը կը կանխարգիլէ մազաթափութիւնը: Մազաթափութեան պատճառներէն մէկն ալ երկաթի պակասի հետեւանքով յառաջացող անեմիան է: Հեմոկլոպինի պակասի հետեւանքով մարմնի հիւսկէնները բաւարար քանակով թթուածին չեն ստանար: Պարբերաբար նուռ օգտագործելու պարագային կ'ամրապնդուին մազի արմատները, կը կարգաւորուի սնուցումը եւ հետզհետէ կը վերանայ մազաթափութիւնը:

7.Նուռը կը կանխարգիլէ արթրոզի յառաջացումը: Արթրոզը տարածուած յօդային հիւանդութիւն է, որու պատճառով կը տառապի աշխարհի բնակչութեան 10 տոկոսը: Արթրոզի հետեւանքով կը բորբոքին յենաշարժական հատուածները եւ կը յառաջանան շարժելու բարդութիւններ: Նուռը կը պարունակէ մեծ քանակով K կենսանիւթ, որ ունի հակաբորբոքային ներուժ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

## ՇՈՒՏ ՅՈԳՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Միայն քունի պակասը չէ, որ կը վատնէ ձեր ուժը: Նոյնիսկ աննշան գործողութիւնները կրնան հիւծել ձեզ թէ՛ մարմնապէս, թէ՛ մտովի:

Գիտնականներու կարծիքով՝ կան շարք մը վատ սովորութիւններ, որոնք կը յոգնեցնեն ձեզ: Անոնք ներկայացուցած են ապրելակերպի քանի մը փոփոխութիւն, որոնք կրնան վերականգնել ձեր ուժերը:

Յոգնած ժամանակ մի՛ խուսափիք մարմնամարզութենէն: Ձեր ուժը խնայելու համար մարմնամարզութիւն ըրէք: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ նստակեաց կեանքով ապրող առողջ չափահասները, որոնք սկսած են շաբաթը երեք օր ընդամէնը 20 վայրկեան մարմնամարզութեամբ զբաղիլ, վեց շաբաթ ետք աւելի քիչ յոգնութիւն զգացած են:

Կանոնաւոր վարժութիւնները կը բարելաւեն սրտանօթային համակարգի աշխատանքը, թթուածին եւ սննդարար նիւթեր կը փոխանցեն ձեր հիւսկէններուն:

Բաւականաչափ ջուր չխմելը նոյնպէս կ'ազդէ ձեր ուժին վրայ: Ջրազրկումը կը տանի արեան քանակի նուազումին, որ կը խտացնէ արիւնը: Անիկա սրտին կը ստիպէ նուազ արդիւնաւէտօրէն աշխատիլ՝ դանդաղեցնելով արագութիւնը, որ անհրաժեշտ է գործարաններուն եւ մկաններուն թթուածին ու սննդարար նիւթեր մատակարարելու համար:

Մեծ է դերը նաեւ երկաթին: Երկաթի պակասը կը ստիպէ մարդուն ջղայնանալ, թոյլ զգալ եւ կորսնցնել կեդրոնանալու կարողութիւնը: Դուք կը յոգնիք, քանի որ ձեր մկաններն ու օրկանները բաւականաչափ թթուածին չեն ստանար: Ձեր ճաշացանկին աւելցուցէք երկաթով հարուստ ուտելիք, որպէսզի կանխարգիլէք անեմիան, սնունդի մէջ ընդգրկեցէք հորթի միս, լուբիա, հաւկիթ, գոց կանաչ բանջարեղէն, ընկուզեղէն, խնձոր, գետնանուշի կարագ եւ այլն: Նաեւ կերէք մեծ քանակութեամբ C կենսանիւթ պարունակող ուտելիքներ՝ քիուի, բնական հիւթեր եւ այլն:

Կատարեալ ըլլալու ցանկութիւնը նոյնպէս ձեզ կը ստիպէ աւելի տքնաջան եւ երկար աշխատիլ, քան անհրաժեշտ է: Գիտնականներու կարծիքով՝ պէտք է յատուկ ժամեր սահմանուին ձեր ծրագիրներուն համար: Հրաժարեցէք լուն փիղ դարձնելու սովորութենէն:

Լարուածութիւնը կրնայ ձեզ կաթուածահար ընել եւ ստիպել յոգնիլ մտովի: Այս ամէնէն ազատելու համար անհրաժեշտ է զբաղիլ մարմնամարզութեամբ, մտախոհութեամբ (meditation). ընկերոջ հետ բաժնեցէք ձեր անհանգստութիւնները եւ փորձեցէք աւելի իրատես ըլլալ: Անպայման նախաճաշեցէք: Մի աշխատիք արձակուրդի մէջ եղած ժամանակ, իսկ քնանալու ժամերուն մի ստուգէք ձեր ելեկտրոնային նամակները:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 35 ՏԱՐԵԿԱՆԸ ԱՆՑԱԾ ԿԻՆԵՐՈՒ

1. Որքան ալ երեկոյթը հետաքրքրական ըլլայ եւ երկարատեւ, ամէն ինչ ըրէք, որ արթննաք ձեր սեփական ննջարանին մէջ:

2. Խմորեղէնի եւ խնձորի միջեւ ընտրութիւնը կատարեցէք ջուրի օգտին:

3. Եթէ ժամացոյցին սլաքները ցոյց կու տան կէս գիշերը, իսկ դուք դեռ պէտք է ձեր գլուխը լուաք, ոտքերու մազահեռացումը կատարէք եւ եղունգներ ներկէք, միշտ ընտրեցէք քունը, որովհետեւ ամէն ինչ կարելի է ուղղել, սակայն ոչ ոք եւ ոչինչ կրնայ քօղարկել ձեր յոգնած, ճմռթկուած դէմքը եւ անտանելի տրամադրութիւնը:

4. Ճամբորդեցէք: Օգտագործեցէք ճամբորդելու իւրաքանչիւր հնարաւորութիւն: Նոր տպաւորութիւնները առանց ծերանալու նոր փորձ ձեռք բերելու հնարաւորութիւն են:

5. Իրավիճակը գնահատելէ առաջ դուք ձեզի հարց տուէք. «արդեօ՞ք այս գործը իմս է», ապա փակեցէք ձեր բերանը եւ գացէք աշխատելու:

6. Ձեր ժամանակն ու ջիղերը ոչ ճիշդ մարդու վրայ կարելի է վատնել միայն մէկ պարագայի, եթէ դուք բժիշկ էք, իսկ այդ մարդը՝ ձեզի բաւական լաւ վճարող հիւանդ:

7. Բուռն սիրավէպի եւ գումար շահելու հնարաւորութեան միջեւ ընտրեցէք երկրորդը:

8. Վէճի ընթացքին ոչ թէ կը ծնի ճշմարտութիւնը, այլ՝ միկրէնը: Ժամանակին արտասանուած՝ «ինչպէս դուն կ'ըսես» արտայայտութիւնը կը խնայէ ձեր ջիղերն ու ժամանակը:

9. Առանձնութեան մէջ անցուցած օրերը աւելի լուրջ արդիւնք կրնան տալ, քան մերսման սրահ յաճախելը:

10. Ոչ մէկ տղամարդ արժանի է, որ դուք տանջուիք անյարմար կօշիկներու մէջ:

## ԴԷՄՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՆՈՂ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Որպէսզի պահպանուի մորթին առաձգականութիւնը եւ կանխուի կնճիռներու յառաջացումը, բաւարար չէ օգտուիլ քսուկներէն, դիմակներ դնել եւ օգտագործել այլ միջոցներ:

Դէմքին համար նախատեսուած պարզ վարժութիւնները մորթի ձեր ամէնօրեայ խնամքը կը դարձնեն շատ աւելի արդիւնաւէտ:

Իսկ ժամանակ եւ ջանքեր այդ վարժութիւնները շատ չեն պահանջեր: Աւելին՝ անոնք կատարել կարելի է իւրաքանչիւր պահ. տնային աշխատանք կատարելու ժամանակ, հեռատեսիլի ծրագրեր դիտելու ընթացքին եւ նոյնիսկ՝ գործատեղիին մէջ:

Ինչպէ՞ս սկսիլ դէմքի համար վարժութիւնները: Դէմքի մարզանքը սկսելէն առաջ փափաքելի է մորթին քսել իւղոտ քսուք եւ թեթեւ մերսում կատարել. մատներու ծայրերով թեթեւ կը հարուածենք ճակատը, այտերն ու քիթը:

Իւրաքանչիւր վարժութիւն անհրաժեշտ է կրկնել 5-10 անգամ: Վարժութիւններու կատարման ժամանակ 5 երկվայրկեան լարեցէք դէմքի մկանները, իսկ այնուհետեւ թուլցուցէք:

Երբ աւարտէք դէմքի մարզանքը, պէտք է լուացուիլ գաղջ, նոր պատրաստուած թէյով: Նախընտրելի է կանաչ թէյը, սակայն կարելի է օգտագործել նաեւ սեւը, սակայն այդ պարագային անիկա շատ թունդ պէտք չէ ըլլայ: Լուացուելու համար կարելի է օգտագործել նաեւ բուժիչ խոտաբոյսերու թուրմ:

Օրական ընդամէնը 5-7 վայրկեան, եւ դուք որոշ ժամանակ անց պիտի տեսնէք, թէ դէպի լաւը որքան փոխուած է ձեր դէմքը:

Վարժութիւններ դէմքի համար

1. Արտաբերէք «Օ» հնչիւնը՝ կլորցնելով շրթունքը: Այս վարժութիւնը կատարելու ժամանակ աշխատեցէք շատ լարել շրթունքի մկանները:

2. Լայն բանալով բերանը, աշխատեցէք քանի մը անգամ յօրանջել:

3. Փակեցէք աչքերը եւ զանոնք ուղղեցէք դէպի աջ, այնուհետեւ՝ ձախ եւ կատարեցէք շրջանաձեւ շարժումներ:

4. Մատներով բռնելով բերանի անկիւնները քաշեցէք վարի շրթունքը եւ լարեցէք կզակը: Հետեւեցէք, որ այս վարժութիւնը կատարելու ժամանակ բերնի անկիւնները չկախուին:

5. Շրթունքներով խողովակ շինեցէք եւ ջանադրաբար արտաբերեցէք «ու» հնչիւնը: Այս վարժութեան ժամանակ շրթունքները պէտք է լարուած ըլլան:

6. Հերթականութեամբ կարելի եղածին չափ շատ լեցնելով այտերը փչեցէք եւ օդը հանեցէք:

7. Աշխատեցէք վարի շրթունքը քաշել դէպի քիթին ծայրը՝ փորձելով հասնիլ անոր:

8. Աշխատեցէք փակել աչքերը, բայց միաժամանակ բութով եւ ցուցամատով պահեցէք կոպերը՝ չձգելով, որ անոնք փակուին:



## Քարոզչական նոր յարձակում

*Շարունակուած էջ 2-էն*

*մարդասիրութեան մասին: Սակայն ի՞նչ մարդասիրութեան մասին կարելի է խօսել Ատրպէյճանի պարագայում: Ատրպէյճանում յայտնուած քանի՞ հայազգի քաղաքացիական անձինք են ատրպէյճանցիների կողմից ահաբեկիչների ոճով տեսախցիկների առջեւ նուաստացուել, ապա սպանուել: Կամ այդ ի՞նչ մարդասիրութեամբ էին առաջնորդւում Պաքւում, երբ մերժում էին միջազգային կառոյցների, ներառեալ՝ Կարմիր խաչի, ԵԱՀԿ-ի, եռանախագահների կոչերը՝ պայմաններ ստեղծել խոցուած ուղղաթիռի անձնակազմի աճիւնների տարհանման համար: Այս ամէնը ցոյց է տալիս, որ Ատրպէյճանում իւրովի են ընկալում մարդասիրութիւնը, իսկ դրա իրական դրսեւորումները ծառայեցնում են ատելութեան եւ այլատեացութեան խորացման համար»,- այսօր այս հարցի վերաբերեալ ասել է Հայաստանի արտգործնախարարը:*

*Ինչ-որ լուծում պէտք է գտնուի ատրպէյճանցի դիւերսանտների հարցը միջազգային հանրութեան օրակարգից հանելու համար: Ատրպէյճանական կեղծիքին ու քարոզչամեքենային պէտք է հակադարձել առաւել համակարգուած ձեւով:*

*Ինչ վերաբերում է Թուրքիայի դիրքորոշմանը ԼՂ հարցում, ապա այստեղ, թերեւս, նորութիւն չկայ: Անքարան, բացայայտ ցոյց է տալիս, որ հանդէս է գալիս առաւելապէս որպես ԼՂ խնդրի կարգաւորման կողմնակից, այն նախապայման ներկայացնելով, քան Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման ջատագով: ԱԳ նախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը պատասխանելով Tert.am լրատուական կայքի հարցին, յիշեցրել է, որ Հայաստանի դիրքորոշումը արտայայտուած էր առանց նախապայմանների յարաբերութիւնների կարգաւորման յայտնի մօտեցմամբ եւ այդ սկզբունքի վրայ էր հիմնուած Թուրքիայի հետ բանակցային գործընթացի մեկնարկը: «Եւ հենց այս ընդհանուր փոխըմբռնմամբ մենք սկսեցինք, վարեցինք գործընթացը եւ եկանք պայմանաւորուածութիւնների: Միջազգային հանրութիւնը՝ շուեյցարացի միջնորդները, ՄԱԿ-ի Գլխաւոր քարտուղարը, ԵԱՀԿ-ն, ԵՄ-ն, ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Ֆրանսան եւ շատ այլ երկրներ, գործընթացի սկզբից մինչ օրս համամիտ են այս մօտեցման հետ: Դրանից յետոյ էլ վերոյիշեալ երկրները եւ կազմակերպութիւնները տարբեր առիթներով բազմիցս վերահաստատել են այդ իրողութիւնը: Առնուազն տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ արձանագրութիւնների շուրջ բանակցող Թուրքական պատուիրակութիւնը տեղեակ չէր, ըստ Ջաւուշօղլուի, ամբողջ աշխարհին յայտնի Թուրքական նախապայմաններին: Նման կեղծ տեղեկութիւններ տարածելով՝ անկեղծութեան մասին խօսելը, մեղմ ասած, տարօրինակ է, բայց, միեւնոյն ժամանակ, բնորոշ Թուրքական իշխանութիւններին»:*

*«ՀԱՅԵԼԻ»*

## Ո՞Վ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԷՐՏՈՂԱՆԻ

*Շարունակուած էջ 7-էն*

*գլուխ, անոնք (ԵՄ) ըսին, որ Թուրքիա շատ աղքատ, շատ տկար երկիր է եւ բեռ պիտի դառնայ Եւրոպայի համար: Շնորհակալութի՛ւն Ալլահին, Թուրքիա այսօր ուժեղ երկիր է... Մենք բեռ չենք Եւրոպայի համար: Թուրքիան դարման է Եւրոպայի համար... Թուրքիա դարման է անոնց ցեղապաշտ հիւանդութեան: Մենք դարման ենք անոնց տնտեսական անկման համար: Մենք դարման ենք անոնց ուժի կորուստին... Անտալուսիայէն (Սպանիա) մինչեւ Օսմանեան կայսրութիւն, եւ կէս դար առաջ սուրբ երթովը մեր ժողովուրդին, որ եկաւ այստեղ՝ Անատոլիոյ բոլոր կողմերէն, «ազան»ի ձայնը (իսլամական աղօթքի կանչ) այս հերոսները բերաւ դէպի Եւրոպա: Մզկիթներու «մինարէ»ները, զորս անոնք սփռած են այս աշխարհամասին մէջ, պաշտպանուած պիտի ըլլան. մենք պիտի շարունակենք պայքարիլ այն ձեռքերուն դէմ, որոնք կը ձգտին անոնց վնաս հասցնել: Ես կը համբուրեմ իմ եղբայրներուն ճակատները, որոնք «Թաքպիր»ը («Ալլահու աքպար» աղօթքի կոչը) հասցուցին Ցիւրիխ... Որքա՜ն սուրբ էին այն մարդիկ, որոնք եկան եւ սերմեր ցանեցին այստեղ, եւ որոնք Ալլահին զօրութեամբ պիտի շարունակեն վերաճիլ արդարութեան հսկայական ծառի մը՝ Եւրոպայի կեդրոնին մէջ: Ոչ ոք կրնայ կանգնեցնել ասիկա...»:*

*Տաւութօղլու յամառօրէն շարունակեց իր անհեթեթ ու ամբարտաւան յայտարարութիւնները անցեալ շաբաթ, այս անգամ՝ արդէն իսկ Անգարայի մէջ, ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներուն ըսելով. «Մենք դաս պիտի տանք Եւրոպայի ցեղապաշտներուն»:*

*Թարգմանեց՝*
*ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ*

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ

*Շարունակուած էջ 7-էն*

*Պէրքսանլար, Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետներու վարչութեան նախկին ատենապետ:*

*- Ուրբաթ, 10 Ապրիլ 2015.*
*ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐ*

*Ովքեր են, որքան է թիւը անոնց, որքան պէտք է ըլլային այսօր. Հայաստանը, հայութիւնը եւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին կ՛ընդունի՞ն անոնց ներկայութիւնը: Քննարկման կը մասնակցին՝ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեան, Առաջնորդ Ամերիկայի Արեւմեան Թեմի, եւ Ռաֆֆի Պետրոսեան, գրող, հասարակական գործիչ, Թորոնթօ, Քանատա: Համադրող՝ Պրն. Գուրգէն Պէրքսանլար, Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետներու վարչութեան նախկին ատենապետ:*

***

*«Հայոց Յեղասպանութեան Լուսաբանումը Համաշխարհային Մամուլի Առաջին էջերին» (Armenian Genocide: Frontpage Coverage in the World Press) հատորին մէջ, աւելի քան 260 մեծադիր էջերու (9"x12") մէջ ամփոփուած են համաշխարհային զանազան թերթերու մէջ 19-րդ դարու երկրորդ կէսէն մինչեւ 20-րդ դարու առաջին քառորդը լոյս տեսած փորագրանկարներ, գծանկարներ եւ լուսանկարներ, իրենց յստակ բացատրութեամբ՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով: Թերթեցէք էջերը, դիտեցէք, խորացէք իւրաքանչիւր նկարի մէջ եւ կարդացէք բացատրութիւնը: Թեւ ու թռիչք պիտի առնէք դէպի անցեալ, պիտի մտնէք հատորին էջերուն մէջ եւ դուք ձեզ պիտի պատկերացնէք այնտեղ՝ սուլթաններու եւ փաշաներու հետ, միջազգային ղեկավարներու հետ, թուրքին ու քիւրտին սուրին տակ, հայուն ամէն մէկ քայլին հետ, եկեղեցիներու մէջ ողջակիզուող, որբ, անտուն, կիսամերկ, պաղատող ու արիւնլուայ, մինչեւ... մահ, եւ կամ՝ հրաշք, փրկութիւն, գաղթականութիւն, նոր կեանք...*

*Մարդուն մէջ Մարդը արթնցնող հատոր մըն է այս, պատրաստուած բացառիկ պարզութեամբ, սակայն ընթերցողին հոգին ալեկ:ոծող բովանդակութեամբ: Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին զուգադիպող այս հրատարակութիւնը լոյս տեսաւ Երեւանի մէջ, 2014 թուականին, երաշխաւորութեամբ՝ Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Գիտխորհուրդին եւ մեկենասութեամբ՝ Լոս Անճելըսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ասպետներու Համախմբումին:*

*Դոկտ. Հայկ Դեմոյեան յառաջաբանին մէջ կը գրէ. «Հետաքրքիր խումբ են կազմում մամուլի այն հրապարակումները, որտեղ Հայոց Յեղասպանութեան թեման ներկայացուած է պարբերականների առաջին էջերին՝ դրանով իսկ կարեւորելով այդ ողբերգութեան հանրային բարձրաձայնման նշանակութիւնը»:*

*Հատորը հինգ գլուխներու բաժնուած է ժամանակագրական կարգով. 19-րդ դարու երկրորդ կէսէն մինչեւ 20-րդ դարու առաջին քառորդ:*

*Արդարեւ, գիրք մը, ցուցահանդէս մը եւ երեք յոյժ հետաքրքրական երեկոներ կը սպասեն մեզի: Ժամադրուած ենք «Սքիրպոլ Սենթըր», Զորեքշաբթիէն Ուրբաթ՝ 8-10 Ապրիլ 2015:*

## ՀԱՅՈՒՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*րէն ամբողջացուց: Սելիմիէցի գիւղացին խնդրեց, որ այցեգինը վճարէ...*

*«Վճարուած է», եղաւ հօրեղբօրս շատ արագ եւ կարճ պատասխանը:*

*Գիւղացին քիչ մը աւելի շփոթեցաւ, իսկ ես զարմացած կը նայէի հօրեղբօրս...*

*«Դուք 1915 թուականին՝ Հայոց ցեղասպանութեան ատեն, օգնութեան հասաք տեղահանուած հայ ժողովուրդին, ապաստան տուիք անոնցմէ շատերու: Ձեր հոգածութեան շնորհիւ՝ փրկուեցան շատ մը հայեր, ներառեալ՝ հօրաքրոջս եւ հօրեղբօրս ընտանիքները՝ իրենց զաւակներով», պատասխանեց հօրեղբայրս:*

*Սելիմիէցի գիւղացին չէր ծնած Հայոց ցեղասպանութեան արհաւիրքի օրերուն: Ձեմ ալ գիտեր, թէ ան լսած էր այդ բոլորին մասին, նաեւ՝ հայ ժողովուրդին նկատմամբ իր գիւղին ցուցաբերած գուրգուրանքին մասին: Զգացուած էր հօրեղբօրս շարժումէն, բայց նաեւ բաւական բան իմացաւ հայուն ողբերգութիւններուն մասին: Ես ալ, անկախ անկէ, որ գիտէի Ցեղասպանութեան մասին, բայց նոյնքան զգացուած էի գիւղացիին նման, նաեւ կը փորձէի այդ վայրկեանին դուրս հանել մարդկայինը մարդուն մէջէն՝ նոյնինքն այն բոլոր ապրած փորձառութիւններէն մեկնելով:*

*Սելիմիէի մասին առաջին անգամն էր, որ կը լսէի: Սուրիոյ Համա քաղաքի արեւելեան մասին մէջ անապատային շրջան մըն է: Անոնք 1915 թուականին Թուրքին անմարդկային արարքներուն կրցած էին « ո՛չ » ըսել եւ եղբայրական ու հոգածու գուրգուրանք եւ վերաբերմունք ցոյց տալ քրիստոնեայ հայուն: Ես պիտի իմանայի, բայց նաեւ սորվէի, որ սելիմիէցի գիւղացին հիւրընկալած է իմ տարագիր հարազատներս, որոնք չվարանեցան վկայելու, թէ՝ մեզ դիմաւորեցին արտակարգ համակրանքով, կերակրեցին ու հոգացին, օժանդակեցին տեղաւորուելու. որպէս պահապան հրեշտակներ՝ եղբայրական գորովագութ վերաբերմունքով վարուեցան մեզի հետ, մեր ողջ կեցութեան: Մեր կեանքը կը պարտինք անոնց»:*

*Եթէ Թուրքը կեանքերու վերջ տուաւ, սելիմիէցի արաբը պահպանեց զանոնք:*

*Հօրեղբօրս համար բժշկութիւնը անքակտելի միաւորն է հայուն եւ համընդհանուր հայկականութեան արժէքի գիտակցութեան: Իր բժշկական ու մասնագիտական կեանքին ընթացքին երբեք պատուեգին չվերցուց ոեւէ հիւանդէ, որ կու գար Սելիմիէի գիւղէն: Ասիկա իր «չնչին» երախտագիտական հատուցում-շարժումն էր Սելիմիէի ժողովուրդի վերաբերմունքին համար՝ հայ ժողովուրդին եւ իր հարազատներուն նկատմամբ: Ու տակաւին ինքնավստահ կերպով կը վկայէր: «Միթէ պատահա՞ծ է երբեւիցէ, որ հայ ժողովուրդը մոռնայ իր բարեկամները»:*

*Ձեմ գիտեր, թէ Սելիմիէ գիւղը եւ անոր բնակչութիւնը ներկայ օրերու սուրիական այս թոհուբոհին մէջ ի՛նչ կացութեան մէջ են, բայց շատ յստակ է, որ սելիմիէցի արաբ գիւղացին եղաւ հայուն բարեկամը: Ան կրցաւ կերտել բարեկամութիւնը, քանի որ հաւատաց «ապրեցնելու» գրաւականին, փոխանակ՝ «սպաննելու»:*

*Արդարեւ, համամարդկային կեանքին մէջ կայ բարեկամութիւնը եւ անոր նկարագիրը կերտող խորքային արժէքը, որ կը կայանայ կեանքերը պահպանելու եւ զայն իմաստաւորելու հիմքերու վրան: Եթէ սելիմիէցի արաբը եղաւ հայուն բարեկամը, ատիկա՝ որովհետեւ իր «գրաւը» դրաւ ապրեցնելու սկզբունքին վրայ: Եւ կեանքի մէջ ապրելով եւ ապրեցնելով է, որ արժէքներ կրնաս ստեղծել:*

*Եղեռնի հարիւրամեակին առթիւ հայը դարձեալ երախտագիտութեամբ կը յիշէ իր բարեկամները, որոնք ապրած ու ապրեցուցած են, տակաւին կ՛ապրին ու կ՛ապրեցնեն համամարդկային արժէքները:*

*Եւ արժէքները չեն կերտուիր սպաննելով...*

## ԳՈՅԺ
## ՈՉ ԵՒՍ Է ԸՆԿ. ՍԱՐԳԻՍ ՔԻՒՖԷԼԵԱՆ



*Սրտի խոր ցաւով իմացանք Ս.Դ.Հ.Կ.ի հաւատաւոր ընկեր՝ Սարգիս Քիւփէլեանի (Ծնեալ Հալէպ 1939) մահը, որ պատահած է Համպուրկի մէջ, Գերմանիա, 20 Փետրուար, 2015-ին:*

*Թաղումը տեղի ունեցաւ Մարտ 03, 2015, Համպուրկ - Գերմանիա:*

*Սգակիրներն են*
*Այրին՝ Տիկին Ժուլիէթ Քիւփէլեան*
*Զաւակները՝*
*Տէր եւ Տիկ. Արսէն Քիւփէլեան եւ զաւակներ*
*Տէր եւ Տիկ. Աւետիս Քիւփէլեան եւ զաւակներ*
*Տէր եւ Տիկ. Պետրոս Քիւփէլեան եւ զաւակներ*
*Տէր եւ Տիկ. Փարամազ Քիւփէլեան եւ զաւակներ*
*Տէր եւ Տիկ. Վանիկ Քիւփէլեան եւ զաւակներ*

*Արեւմտեան Ամերիկայի Շրջանի Ս.Դ.Հ.Կ.ը իր կառոյցներով կը յայտնէ իր խորազգաց ցաւակցութիւնները Հանգուցեալ Ընկեր Սարգիս Քիւփէլեանի Տիկնոջ, զաւակներուն, թոռնիկներուն եւ համայն հարազատներուն:*

*Ընկեր Սարգիս Քիւփէլեանի նուիրումը Ս.Դ.Հ.Կ.ին եւ Հ.Մ.Մ.ին եղած է անսակարկ եւ անոր գործունէութիւնը՝ անգնահատելի: Ան եղած է մարդասէր եւ ընկերասէր, ծառայելով իր ազգին եւ միութեան, առանց վարանելու:*

*Հողը թեթեւ գայ վրան:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ԱԶԱՏՈՒՀԻ ՏԷՓՈՅԵԱՆի մահուան առիթով փոխան ծաղկեպսակի կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները Մասիսին*

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Պերճուհի Ճինպաշեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Պետիկ եւ Լենա Խոտանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Հայկ եւ Արմինէ Հաճընեան | $100 |
| Տիկ. Սոնա Յովնանեան | $100 |
| Փիէր Պարպար | $100 |
| Գրիգորեան Եղբայրք | $100 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Գնար Պողարեան | $50 |
| ՏիարՍուրէն Խուտանեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Մանուէլ եւ Հերմին Գաֆարճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Հայկուշ Քէշիշեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Մկօ եւ Էլէն Փօչօղլեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Հուրի Թաթլեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Էլի եւ Ազատուհի Պալի | $50 |
| Տէր եւ Տիկ. Ջոհրապ եւ Անժելա Թօփալեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Սէմ եւ Գոհարիկ Սասունեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Յարութ եւ Մարօ Մաթոսեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Զարեհ Պաղտասարեան | $50 |

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Տէփոյեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որ անձամբ, հեռաձայնով եւ կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով մասնակից դարձան իրենց սուգին ՝ Ազատուհի Տէփոյեանի մահուան առթիւ:*

*Առ այդ կը նուիրեն $200 տոլար «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՕԺԷՆ ՄԱԶՄԱՆԵԱՆի մահուան տխուր առիթով, Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան կը յայտնեն իրենց խորազգաց ցաւակցութիւնները, յատկապէս զաւկին՝ Տէր եւ Տիկ. Աւետիս Մազմանեանին եւ համայն հազարազատներուն:*

*Առ այդ կը նուիրեն 100 տոլար «Մասիս»ին:*

**www.massispost.com**
**daily news updates**

## ՍՐՏԱԳԻՆ ԿՈՉ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌԱՋ

*Շարունակուած էջ 14-էն*

*Լիբանանն ու լիբանանահայութիւնը Պէյրութէն ընդամէնը շուրջ միայն 100 քլմ. հեռաւորութեան վրայ գտնուող Տաէշի զինեալներէն: Լիբանանեան անձնազոհ բանակը մինչեւ երբ կրնայ դիմադրել երկրին արեւելեան սահմաններու սեմին գտնուող վտանգին, եւ ի տես ՄԱԿ-ի կամ Տաէշի դէմ դաշնակցած երկիրներու անկարողութեան ո՞վ պիտի կրնայ կենալ Լիբանանեան Բանակի կողքին՝ դիմադրելու դեռեւս անխուսափելին: Հետեւաբար ո՞վ պիտի երաշխաւորէ Լիբանանի ապահովական ապագան:*

*Ի տես այս բոլորին, ի՞նչ կ'ընէ լիբանանահայութեան ղեկավարութիւնը: Ի՞նչ տեսակի կանխազգուշական միջոցներու դիմած է ան՝ փրկելու Լիբանանի տարածքին մեր ունեցած մշակութային արժէքները: Բնաւ մտածուած է եռացող այս շրջանէն հեռացնելով դէպի աւելի ապահով վայրեր՝ դէպի Հայրենիք փոխադրել մշակութային արժէք ներկայացնող շարժական կարգ մը իրեր ինչպէս ըրաւ օրինակ Թուրքիոյ ղեկավարութիւնը երբ շաբաթ մը առաջ նմանօրինակ մտահոգութեամբ մը իրենց նախահօր՝ Օսմանի մեծ հօր Սուլէյման Շահի այսպէս կոչուած «աճիւնները» Սուրիայէն փոխադրեց Թուրքիա...:*

*Ատենը չէ՞ առեւտրական արժէք ներկայացնող եւ գաղութիս հաստատութիւններուն նիւթական ապահովող մեր կարգ մը ազգային կառոյցները ծախելով տնտեսական միեւնոյն ներդրումը ընել համեմատաբար ապահով՝ Հայաստանեան մեր Հայրենիքին մէջ այդ կալուածներուն տէր միեւնոյն ազգային հաստատութիւններուն անունով: Սուրիոյ մեր ազգային կառոյցներուն տնտեսական արժէզրկումը այսօր բաւարար դաս մը չէ՞ դժբախտ օրինակէ մը սորվելու:*

*Փորձանքը գալէն ետք այլեւս ինչի՞ կրնան ծառայել ապահովագրական ընկերութիւններուն տալիք գումարները կամ մեր մատենադարաններուն ու թանգարաններուն փայտէ դռները պաշտպանող ելեկտրոնային կոտերով փլասթիքէ կղպանքները Տաէշներու մուրճին ու կրակին դիմաց՝ Այնճարէն մինչեւ Անթիլիաս, Ջմմառէն մինչեւ Հայկազեան...:*



*Մեր կոչը անհեթեթ խուճապ մը ստեղծել չէ, որ կը նպատակադրէ անշուշտ, այլ հեռատես կանխազգուշութեան սրտագին կոչ մըն է՝ Աստուծոյ առաջ եւ պատմութեան համար...:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 100,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**---------------------- **Fax :** -------------------------

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

*Շարունակուածէջ 15-էն*

No. 3604.

*****

1926ին զուիցերիացի լրագրող, Էմիլ Հիլտըրպրանտ հարցազրոյց մը ունեցած է Մուստաֆա Քեմալ Փաշայի հետ, որ հետագային անուանուեցաւ Աթաթուրք: Այդ հարցազրոյցին մէջ ան ամբաստանած է Երիտթուրքերը «միլիոնաւոր քրիստոնեայ քաղաքացիներ» ջարդելու յանցանքով: Նշենք որ 1926-թին, Աթաթուրքի հակառակորդները, որոնց մէջ կային կարեւոր թիւով Երիտթուրք կուսակցութեան անդամներ, մահափորձ կազմակերպեցին անոր դէմ: Մահափորձը ձախողեցաւ, պատասխանատուները ձերբակալուեցան եւ գնդակահարուեցան, որպէս ազգի դաւաճան:

Հիլտըրպրանտի հարցազրոյցը հրատարակուեցաւ 1 Օգոստոս 1926-ին, «San Francisco Examiner" թերթի մէջ:

Այդ հարցազրոյցի մէջ, ի միջի այլոց Աթաթուրքը հետեւեալ հաստատումը կ'ընէ.

«Նախկին Երիտասարդ Թուրք կուսակցութեան այս թափթփուքները, որոնցմէ հարկաւոր էր հաշիւ պահանջել բնաջնջելու համար մեր միլիոնաւոր քրիստոնեայ քաղաքացիները, որոնք անգթօրէն եւ զանգուածաբար բռնահանուեցան իրենց տուներէն եւ ջարդուեցան: Անոնք (երիտասարդ թուրքերը) հանգիս ապրած են հանրապետական օրէնքներու հովանիին տակ եւ մինչեւ այսօր իրենց գոյութիւնը պահպանած՝ կողոպուտի, աւազակութեան եւ կաշառքի ճամբով, թշնամական դիրք բռնելով որեւէ գաղափարի կամ առաջարկի դէմ: Անոնք մերժած են իրենց մասնակցութիւնը բերել որեւէ շինարար աշխատանքի եւ պարկեշտօրէն ճակտի քրտինքով վաստակիլ իրենց ապրուստը»:

KEMAL ATATURK

*****

Հայոց Ցեղասպանութեան հետ առնչուած եւ ցարդ յայտնաբերուած թրքական վաւերաթուղթերուն ծանօթանալու համար՝ կարդալ Թանէր Աքչամի «Երիտասարդ Թուրքերու Ոճիրը Մարդկութեան Դէմ. Հայոց Ցեղասպանութիւնն ու Ցեղային Մաքրագործումը Օսմանեան Կայսրութեան մէջ« ("The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire") գիրքը, զոր հրատարակեց Princeton University Press-ը, 2013):

Գերմանիոյ դեսպան՝ Ուանկէյնհայմ 07/07/1915-ին գրած է իր կառավարութեան՝

*****

«Թրքական կառավարութիւնն իսկապէս կը հետապնդէ Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող հայերը բնաջնջելու իր ծրագիրը»:

(Wilhelmstrasse archives)."

Գերմանացի սպայ՝ Արմին Թ. Վեկները, որ ղրկուած էր Թուրքիա բժշկական գծով օժանդակելու թրքական բանակին, ականատես եղած է հայկական ջարդերուն եւ թաքուն լուսանկարչական գործիքով նկարած՝ բազմաթիւ լուսանկարներ, որոնք պատերազմի աւարտին լոյս տեսած են միջազգային մամուլի մէջ: «Բաց Նամակ Նախագահ Ուիլսընին» գրութեամբ, Վակնըր Միացեալ Նահանգներու նախագահի ուշադրութեան յանձնած է հայկական անկախ պետութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը: Նամակը տպուած է 23 փետրուար, 1919-ին «Berliner Tageblatt» թերթի մէջ: Այդ նամակի մէջ, ի միջի այլոց, ըսուած է՝

«...Այստեղ անոնք դաշունահար սպանուեցան քուրտերէն, կողոպտուեցան ոստիկաններէն, գնդակահարուեցան, կախաղան հանուեցան, թունաւորուեցան, դաշունահարուեցան, խեղդամահ եղան, համաճարակէ մահացան, ջրահեղձ եղան, սառեցան պաղէն, տոչորուեցան ծարաւէն, սովամահ եղան եւ իրենց մարմինները կամ նեխեցան կամ ալ գայլաշուններու կեր դարձան: Երեխաները լալամահ եղան, մարդիկ իրենք զիրենք ժայռերու զարկին, մայրերը իրենց զաւակները ջուրը նետեցին, ուրիշներ՝ իրենց երեխաները գրկած երգելով Եփրատ Գետը նետուեցան: Անոնք երկրի վրայ գոյութիւն ունեցող բոլոր մահերով մահացան, բոլոր ժամանակներու մահով մեռան»:

ARMIN T. WEGNER

*****

Ա. Աշխարհամարտէն մօտ քառորդ դար յետոյ, գերմանական բանակի Լեհաստան արշաւման նախօրեակին, 22.8.1939-ին, Հիթլեր հետեւեալ հրամանը արձակած է՝

« Հրամայած եմ իմ մահաբեր ջոկատներուս, որպէսզի առանց գութի ու խղճահարութեան ոչնչացնեն լեհերէն խօսող ազգին պատկանող բոլոր մարդիկը, կիները եւ երեխաները: Միայն այս ձեւով կրնանք ձեռք բերել կենսական հողային տարածքը, որուն պէտք ունինք»:

ADOLF HITLER

Այն հարցումին, թէ ինչ՞ պատասխան պիտի տայ ան գալիք սերունդներուն՝ Հիթլեր պատասխանած է.

« Ո՞վ այսօր կը յիշէ հայերու բնաջնջումը»:

Գերմաներէն բնագիրը տեսնել «Atken zur Deutschen Auswartigen Politik« 1918-1945. Serie D, Band VII, (Baden-Baden, 1956):

Եթէ հայոց ցեղասպանութեան պատասխանատուները դատուէին Նիւրեմբերկի նման միջազգային ատեանի մը կողմէ, Հիթլեր պիտի չհամարձակէր նման յայտարարութիւն մը անել:

Հայոց Ցեղասպանութեան հետ առնչուած եւ միաժամանակ Գերմանիոյ մեղսակցութիւնը հաստատող փաստաթղթերուն ծանօթանալու համար, տես վերջերս լոյս տեսած «Հայոց Ցեղասպանութիւնը, Փաստաթուղթեր Գերմանիոյ Արտաքին Գործոց Գրասենեակի Արխիւներէն, 1915-16» ("The Armenian Genocide, Evidence from the German Foreign Office Archives, 1915-16") խորագրուած գիրքը, հրատարակուած 2014-ին, Նիւ Եօրք եւ Օքսֆորտ, խմբագրութեամբ Ուլֆկենկ Կեսթի (Wolefgang Guest):

**(Շարունակելի)**

